
Հ. Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ- ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅԹԱՌԻ ԶԵՎ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ)

XIX դարի վերջին, հայ ազգային-ազատագրական շարժման բուռն վերելքի պայմաններում, երբ այդ շարժումը թևակոխում է զինված պայքարի ժամանակաշրջանը, ծնունդ է առնում և հայուկային շարժման կողքին՝ ազատագրական պայքարի տարածված միջոցներից նեկը դառնում ահարեւկությունը: Երևույթ, որը որոշակի բնութագումներով շարունակում է մնալ XX դարի հայ կյանքի անքածան ուղեկիցը, ժամանակ առ ժամանակ իր արձագանքներով հուզելով աշխարհը, ստիպելով բարձրաձայն խոսել իր, դրան գործոնի, զոյլության մասին: Ի՞նչ էր հայկական ահարեւկությունը՝ հայկական կոնկրետ միջավայրում ծնված և ազատագրական շարժման կարիքներով թելադրված պայքարի որոշակի միջոց՝ թէ՝ Արևմուտքի՝ XIX դարի հեղափոխական շարժումների բովում ծնված և հայկական միջավայր ներմուծված մի անժանոր դեղամիջոց՝ իր անկանոնութեանի հետևանքներով: Նպատակահարմա՞ր էր այն որպես պայքարի միջոց, XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ, հայկացին արևմտահայ, իրականության համար: Կարո՞ղ էր այն ազգային կենսական պրոբլեմների լուծման միջոց հանդիսանալ: Որո՞նք էին նրա կիրառման թույլատրեալ սահմանները հայ ազատագրական պայքարի գործընթացում: Արդյո՞ք այն բավարար զգուշությամբ օգտագործեց ազատագրական պայքարի գլուխ կանգնած ուժերի կողմից: Այս և նման այլ հարցեր այսօր ել սպասում են պատասխանի:

1877-1878թթ. ուսւ-բուրքական պատերազմից հետո, Հայկական հարցի միջազգայնացումը հույսեր է ներշնչում հայությանը, որ հայկական բարենորոգումների ծրագրի իրազործումը կհանգեցնի հայ-

կական ինքնավարության, իսկ ապագայում նաև՝ անկախ պետության ստեղծմանը: Իր հերթին, գրկվելով Եվրոպական ալյուստրացի մեծագույն մասից, Օսմանյան կայսրությունն ավելի ամուր է կառչում ասիական նահանգներին, աշխատելով բույ շտալ այստեղ նոր Բուլղարիայի ստեղծումը: Այդ խնդրի լուծման ամենահեշտ ուղիղ համարելով հայության բնաջնօւմը և դեռևս 1870-ական թվականների վերջին այն հոչակերպ պետական քաղաքականություն՝ բույր կառավարողները գործողության մեջ դրեցին վարչական, ժողովրդագրական, հարկային և այլ միջոցառումների մի ամբողջ համակարգ՝ նպատակ ունենալով Արևմտյան Հայաստանի հայարափումը: Իսկ 1890-ական թվականների կեսերին, հայ ազատագրական շարժման դեմ պայքարի ընթացքում, սուրբս Արքու Համբիլի օրինությամբ, գործողության մեջ է դրվում արևմտահայության բնաջնջնան ծրագիրը:

Բարենորոգումներն իրականացնելուց բույր կառավարողների հրաժարկելը, նրան կողմից ցեղասպանությունը պետական քաղաքականություն հոչակելը և այս խնդրերի նկատմամբ մեծ տերությունների կրավորական կեցվածքն իրենց կիրքն են զնում հայ ազատագրական շարժման փրա: Նրանում տիրապետող է զառնում «երկար շերեփի» գաղափարը: 1880-ական թվականների վերջերից սկսած է հայ ազգային-ազատագրական շարժման զինված պայքարի շրջանը: Արևմտահայ ազատագրական շարժումը դեկավարելու և ուղղություն տալու համար հանդիս են գալիս հայ քաղաքական կուսակցությունները:

Նման պայմաններում անվերապահորեն հեղափոխության և ապստամբության հետ է կապվում արևմտահայ զանգվածների ազատագրումը և նրանց քաղաքական ինձերի իրականացումը: Դա իր արտացոլումն է զնում նորակազմ կուսակցությունների՝ հնչալյանների և դաշնակության ծրագրերում¹: Ազատագրական պայքարի ուղղությունը, բնականարար, առաջարտում է նաև պայքարի միջոցների հարցը: Հայ ազատագրական շարժումը որոնումների սննիքածեշտությունը չզգաց, քանի որ աչքի առաջ կին բարեկան ժողովուրդների ազատագրական պայքարի քարի օրինակները և դրանց ակնհայտ արդյունքները՝ ի դիմության նորակազմ պետությունների: Բայկանյան հեղափոխական կազմակերպությունների և ուսուական «Նարողնայա վոլյա» կազմակերպության կողմից մշակված ու նրանց պայքարի՝ գործնականում փորձված մերուներն են, որ հարմարեցվում են արևմտահայ իրականության

¹ Տե՛ս Ծրագիր հնչակեան կուսակցութեան, Լոնդոն, 1897, էջ 10: Ծրագիր Հ. Յաշնակցութեան, Ժնև, 1906, էջ 11:

պայմաններին: Հայորուկային կոփվները, զինված ապստամբությունները, ինքնապաշտպանական մարտերը, արշավանդները, ասպատակությունները, ահարեկումներն ու ցույցերը հայ ազատագրական շարժման կողմից որդեգրվում են ուղիւն բորբական բռնապեսության դեմ պայքարի հիմնական ձևեր, հոյս լունալով, որ լրանց ծավալում ի վերջո կանգնեցնի լոյնանոր զինված ապատամբության և Հայկական հարցի դրական լուծան: Հայորուկն ու ահարեկչը զառնում են ազատագրական պայքարի գործուն անձերը: «Ստեա հայորուկ և տերրօրիսան նույնանիշ են, - գրու է Մ. Վարանդյանը: Երկար սարիներ հայ ազատագրական շարժումը կամփուիւր այդ երկու զարդարներու մեջ: Հայորուկը և տերրօրիսաւը կոչուած էին այդ շարժման ճամբան հարթելու, անոր ընթացքը դիւրացնելու երկրի մեջ և երկրէն դրու»²:

Այսպիսով, XIX դարի վերջին հայ ազգային-ազատագրական շարժման մեջ զինված պայքարի միջոցներից մեկն է դառնում ահարեկությունը, երևույթ, որը մեր իրականության մեջ արժանացել է ամենատարբեր ու հակասական զնահատականների՝ անքննադատ հիացմունքից միջն բացարձակական ժխտականության մեջ պայքարի արդյունավետ միջոցներից մեկը: «Տեօրուկան զորդողութիւն, իրեւ պատիժ թիւր բռնաւուներին, որպէս և լրտեսներին, նատիշներին, դաւաճաններին, - ազգաւարում էր հնչալյան ծրագիրը, - Տեսոր պետը է լինի յնդափոխսական կազմակերպութեան ինքնապաշտպանութեան միջոց և հասարակութեան ծրագիրների ու կատերի գործնական ապատամերներու»³, - ասվում էր Օրանուս: Թեն պետք է խասապանելու որ կուսակցությունների ծրագրերում ահարեկչությունը որպէս պայքարի միջոց միայն ընդհանոր զգերով կ ներկայացվում: Միայն հետագա

¹ Մ. Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցութեան պարմութիւն, Երևան, 1992, էջ 176-177:

² Ծրագիր հնչակեան կուսակցութեան, էջ 10:

³ Ծրագիր Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 14:

տարիներին, ազատագրական պայքարի ընթացքում ու նրա դասերի ազդեցուրյամբ՝ որոշակիորեն ճշգրտվում են ահարեկչուրյան առանձին ձևերի կիրառման նպատակահարմարուրյան և այլ հարցեր:

Ինչ՝¹ արդյունք է հայ ահարեկչուրյունը: Այն օտար (ոռու նարողնիկների) փորձի սոսկ մեխանիկական՝ անքննադաշտ կիրառումն էր հայ իրականուրյան մեջ՝ մեր ժողովոյի, հատկապես արևմտահայուրյան համար իր ծանր հետանքներով, ինչպես պնդում են առանձին հեղինակների, թև՝ օրինաշափ ծնունդը XIX դարի վերջի հայկական միջավարի, բնական պատասխանն այն բռնուրյունների, ճշշուների ու հարստահարուրյունների, որոնց ենթարկվում էր հայուրյունը Օսմանյան կայսրուրյունում: Հնարավոր չէ ժխտել հայ ազգային կուսակցուրյունների ու նրանց ծրագրերի ազգակցուրյունը նարողնիկական զաղափարախոսուրյան հետ: Անառարկելի են նաև նրանց միջև եղած սերո կապերը: Ի վերջո, հայ բաղարական կուսակցուրյունների շատ ղեկավարներ վարզապես դաստիարակվել և դրանք հեղափոխականներ և նախքան դեմ «Նարողնայա վոլյու»-ի մաս հերոսական պայքարի անմիջական ազդեցուրյամբ: Բնական էր, որ այդ հեղափոխական դաստիարակուրյունը, պայքարի ձևերն ու մերժմանը և մասնավորապես ցարիզմի դեմ ահարեկչական պայքարի փորձը, ցանքով է դեմ նետվել և պետք է այս կամ այն շափով օգտագործվելին հայ ազատագրական պայքարի գործնականում: Այլքանզի հանդերձ, կարծում ենք, ճշշտ չէ քաղաքական կուսակցուրյունների, հատկապես դաշնակցուրյան կողմից, ազատագրական պայքարի ընթացքում իրականացված ահարեկչական գործունեուրյունը բնուրյագրել որպես նարողնիկուրյան փորձի սոսկ մեխանիկական կիրառույթուն:

Նախ նարողնիկական ահարեկչուրյունն ուներ հստակ արտահայտված տցիական սողովածուրյուն և երկրորդ ունենալով հարձակութական բովանդակուրյուն, այս, ի վերջո նպատակ էր հետապնդում փոխելու Ռուսաստանի բաղարական համակարգը: Մինչդեռ ահարեկչուրյունը հայ իրականուրյան մեջ հետապնդում էր ազգային-ազատագրական խնդիրներ, և, որպես կանոն, սահմանափակվում ինքնապսարանուրյան ու վրիժառուրյան ջրանակներում:

Դարեր շարունակ Օսմանյան կայսրուրյանը բնորոշ են եղել

1 Տե՛ս Լիո, Թուրքական յեղափոխուրիան զաղափարախորհրմանը, հ. Բ. Փարիզ, 1935, էջ 10; Համբ. Լ. Զորմիսիան, Համապարկեր արևմտահայոց մէկ դարու պատմուրիան, հ. Բ. Քեյլոր, 1974, էջ 299-301:

հպատակ ժողովուրդների հարստահարումն ու կողուստություր, համբնիանուր կաշառակերուրյունը, օրենքի, կարգ ու կանոնի խպատ բացակայությունը: Արդու Համիլի գահակարուրյան տարիները գովիս են ավելի ծայրահեղ դարձնելու գոյուրյուն ունեցող իրավիճակը: Հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարին որպես պատասխան, տիպական են դառնում զանգվածային ջարդերը, սպանություններն ու խժդությունները: Օսմանյան կայսրուրյունը վերածվել էր բացահայտ ուսիթկանան պետուրյան: Համատարած բանտարկուրյուններ, աքսոր ու կախաղաններ: Անենորեք վիտում էին անենագր սուրբանի բարեևանուրյունը վայելող լրաւեններն ու մատնիչները: Հայերի համար, այս բոլորից բացի, չարիք են դառնում նաև բրեթից հավաքագրված «համիլին» գորազները: Էր ծնորում կենտրոնացնելով անենագոր սպատմիչ լծակները: Արդու Համիլը վարում էր բացահայտ ահարեկչական բաղարականուրյուն հպատակ ժողովուրդների, հատկապես հայուրյան նկատմամբ՝ խելքերով ընդդիմուրյան ամենաշնչին փորձն անզամ: Խորքական մղամանցի այդ մքնուրուտում էլ ծնունդ է առնում հայկական ահարեկչուրյունը, որպես ժողովրդական վրեժմնադրության պորուկուրյուն: Օտար հողի ծնունդ և խարուղ պայմաններում հայ կյանքին միանագանյան խորը ու օտար ահարեկչուրյունը բռնուրյան ու հալածանքի օրերին դառնուու է հայուրյան համար անխափակելի և նպատակահարմար գործեկալերաց: Վրեժի ու հատուցնան զգացում, ազատուրյան ծարավ, ոտնակոյն, անարգված արդարուրյան պահանջ ահա նրան սեղուող ակունքները: Դրանք էին, որ ուժ և համարձակուրյուն տվեցին երբեմնի ստրուկ ու խոնարի զանգվածներին, որոնց շարքերից շարան-շարան դուրս նետվեցին ժողովրդական վրեժմնադրության հարեւնքները, իրեն ահարեկչուրյան անվեներ նարմնացուները: Հայ վիճակառն սանհասիրտ մարդասապան չէր, այս զաղափարապաշտ զինվոր, որ պատրաստ էր զնալ ստույգ մահկան հանուն ազգային ինդաւաների իրականացման և ուսնահարված իրավունքների վերականգնման: Երիցս իրավացի էր է. Ակնունին, երբ զլում էր հետևյալ տողերը. «...հարուածների դէմ, այլս ներկ պարանոցներ չեն ձգւած, ինչպես երբեմն, և ոչ էլ ստրուկների խոնարի զլումները: Հարուածի դէմ հարուած, մէկին երկու, մէկին երեք, ահա օրուա նշանաբան, յեղափոխական մարտի ընդունված բանաձնը: Տերրորը մէկն է այդ բանաձներից: Նա յեղափոխութեան փայլը չէ, այս կնճիրը, սանցանկալի, նոյնիսկ տգեղ նրա զեղեցիկ ճակատի վրա, բայց սանցանկալի, իրը արդիւնք այն պայմանների, որոնց ստեղծողն ու սնուցանողը ինքը բռնապետուրիւն է, իր ապականող թէժինով,

բռնաւորների իր հսկայամարմին լեգէօնով»¹: Այս տողերը միանգամայն համապատասխանում էին 1890-ական թվականների այն պայմաններին ու մթնոլորտին, որոնք ստեղծվել էին Օսմանյան կայսրությունում, որոնց ծնննեն էր նաև հայկական ահարեկչությունը:

Կանցնեն տարիներ: Կզա 1903 թվականը, և այս անգամ արդեն կովկասը ականատես կիմին ցարական բռնակալության դեմ հայկական ահարեկչության հանդուզն ձևանարկների՝ որպես պատասխան ցարական իշխանությունների վարած հայահալած քաղաքականության, որպես արդյունք հայության ամենասարրական իրավունքների ու ազատությունների ուսնահարման: Ու նորից կիաստատի այն պարզ ճշմարտությունը, որ հայկական ահարեկչությունը ծնվում է այստեղ, որտեղ օրվա պահանջներն են վրիժառությունն ու հաստիցումը, որտեղ արդարությունը տկար է ու ուսնահարպան:

Ի՞նչ տեսքով պես ու որդեգրվեր ահարեկչությունը հայ ազատագրական շարժման կողմից: Ընդունմայի էին նրա համար աշխարհին հայտնի և այլ ժողովությունների ու քաղաքական ուժերի գործնականում արդեն փորձարկված պայքարի ձևերն ու մերությունը: Կիրառելի՞ էին արդյոք այդ միջոցները Օսմանյան կայսրությունում, որն իրենից ներկայացնում էր Երեխկական, կրոնական, ծագվարյան, տնտեսական ու քաղաքական հակառակությունների բարդ հանգույց: Այս և նմանատիպ հարցերի պատասխանները միանգամից չեն, որ գտնվում էին: Ավելի հաճախ դրանք ճշգրտվում էին ազատագրական պայքարի ընթացքում: Եվ թիւ չէին դեպքերը, երբ այլ ճշգրտությունները կատարվում էին դար դասերի գնու:

Ամրոջությամբ վեցրած, ընդունելի է ազատագրական պայքարի ընթացքում ահարեկության հնարավոր ձևերի այն տարբերակումը, որն առաջարկում է Ռուբենը²: Նրա կարծիքով, ահարեկումներն ըստ ընտրյի բաժանվում էին արտաքին-քաղաքականի և ներքին-ազգային: Արտաքին-քաղաքական ահարեկումներն իրենց հերքին բաժանվում էին երեք խմբի՝

- ա) զանգվածային ահարեկում,
 - բ) պետական պաշտոնյաների սանձում,
 - գ) պետական խարիսխների քանդում:
- Ներքին-ազգային ահարեկումները բաժանվում էին երկու խմբի՝
- ա) թշնամու հետ սեփական ազգի դեմ բացեկրաց համագործակցող անձի կամ խմբի ահարեկում,

1 Է. Ակնումի, «Դապի կորի», ԺԱՆ. 1904, էջ 265-266:

2 Տիւ Ռուբեն, «Հայ յեղափոխականի մը յիշարականը», հ. 1, Երևան, 1990, էջ 92:

բ) մատնիշների ու դավաճանների ահարեկում:

Սկզբից ներ հայ ազատագրական շարժումը ընդունելի համարեց ներքին թշնամիների՝ լրտեսների, մատնիշների, դավաճանների, թշնամու հետ հանագործակցողների ահարեկումը: Ահարեկման այս ձևը համական տիպական էր 1890-ական թվականների առաջին կեսին (մինչ Օսմանյան դրամատան գրավումը), թեև հետագա տարիներին էլ նրա կիրառման պրակտիկան շարունակվում է:

«Դրօշակ»-ն այլ տարիներին բացահայտեն ազդարարում էր, որ «...լրտեսները, դավաճանները արժանի են պատժի, արժանի են մահի: Արժանի են պատժի այն ամենը, որոնք իրանց սեփական շահի համար զոհում են ընդհանրութեան շահերը, արժանի են մահի ամենը, որոնք «ես»-ի համար ուսնակողի են անում մեր հարազոտ Մօր արինն ու հոգին»¹: Ահարեկման այս ձևը ինքնազաշտպանական մարտավարության դրսերում էր: Պատժի, վրիժառութական նպատակներ հետապնդելով հանդերձ, նրա ինասար դրանով չեր սահմանափակվում: Ներազագային միջազգայրում այն ստանում էր բարյալան մեծ նշանակություն: Հայունի մատնիշի, դավաճանի կամ լրտեսի իրապարակային պատժիքը բազալերում էր մասային, նրանից վանում միայնության ու անհուսության զգացումը, կազդրություն ներազային նընդորսություն, ավելի կազմակերպում և համամբրում այն: Մյուս կողմից, նման ահարեկումները սաստում էին պրոտենչյալ մատնիշին, դավաճանին լրտեսին, ազդարարելով, որ ազգային ոչ մի արար անպատճի չի մնա և հայ վրիժառության պատժի ձևարշը, աներաժշտության դեպքում, կիսանի նաև իրենց:

Յուրաքանչյուր ահարեկումից հետո կատարվող զանգվածային ձերքակալությունները, բնականաբար, զնում են ահարեկումների նպատակահարմարության հարցը: Սակայն, այն հանգանանքը, որ յուրաքանչյուր մատնիշի, լրտեսի ու դավաճանի ոչնչացումը ոչ պակաս քիվ անմեռ մարդկանց փրկություն էր նշանակում, միանգամից վճռում է հարցը հօգուտ ահարեկման: Բնազրով դա ընկալում էր նաև ժողովուրդը, որի համակրանքը մեծանասամբ ահարեկիների կողմն էր լինում: Պատահական չեն, որ թեև նմանատիպ ահարեկումների մեծագույն մասը կատարվում էր օրը ցերեկով, բոլորի աշքի առաջ, սակայն հանդուզն վրիժառուներին, մեծամասամբ, հաջողվում էր առաջարանքը կատարելուց հետո բարեհաջող հեռանալ ու զերծ մնալ ձերքակալություններից:

Սիայն Օսմանյան դրամատան գրավմանը նախորդած ամիսներին

1 «Դրօշակ», 1893, N 4:

Կ. Պոլսում հայ վրիժառուների դատաստանին արժանացան լրտես Արտաշեսը, ոստիկանության կոմիսարներ Հաճի Տիգրանն ու Մարգարը, մատնիչ, վիրաբոյժ Սկրտիջ Թուրտոնջինը, նախկին վարդապետ, դավաճան ու մատնիչ Մամբրեն, լրտես Հովհաննեսը և ուրիշներ, որոնք պատճառ էին դարձել ինչպես իրենց նախկին թնկերների, այնպես և հարյուրավոր՝ միանգամայն անմեղ հայերի ծերրակալության ու մահվան: Սակայն ահարեկման նման ձևը չէր սահմանափակվում միայն Կ. Պոլսի շրջանակներում և ավել կամ պակաս շափերով կիրառվում էր նաև Արևմտյան Հայաստանի բոլոր անկյուններում՝ բնակչանքար առավել արդյունավետ լինելով այնուեղ, որ ավելի լավ էր կազմակերպված ազատազրական շարժումը: 1890-ական թվականներին հայ վրիժառության զոհ են դատնում Շատին Կարահիսարում՝ լրտես Հաճի Կարապետը, Վանում՝ մատնիչ ու լրտես Նշան Խերզիքիայանը, Գևորգ Չրադյանը, Հովհաննես Տեր-Պոլոսյանը, դավաճան ու մատնիչ Կարապետ Ամենանը (Բաշը), Կարինում՝ մատնիչ Հարուրյուն Տեր-Մարգսյանը, Երգնկայում՝ Արմենակ Հայկոնին, Մշր Դաշտում՝ մատնիչ ուստի Կրայոն, դավաճան ու մատնիչ Տեր Քարտեղ քահանան, Բաղեշում՝ մատնիչ ու լրտես Խաչիկ Բախալյանը, Ա. Կարապետ Քանին նախկին միարական Կարապետ Վարդապետ Եսայանը և որիշներ: Ավելին երկուոր ժամանակին ամեն ինչ արել էին միջազգային թնիքի հանձնաժողովից Սասունի ջարդերը քարցնելու համար, իսկ հետագայում, համազործակցելով բոլորական ոստիկանության հետ՝ պատուհաս էին դարձել Տարոնի հայության համար:

Վերը նշված տարիներին և հետագայում իրականացված նմանատիպ ահարեկումների սուս թվարկումն անգամ անհնար է: Պարզապես նշենք, որ մինչև երիտրուրական հեղաշրջումը Արևմտյան Հայաստանում կատարված նմանատիպ վերջին նշանավոր ահարեկումը կապված էր Դավոյի դավաճանության հետ: Ծննդով այդ պատճության նանրամասնությունների մեջ՝ նշենք, որ ահոելի էին Դավոյի դավաճանության պատճառած նյութական ու բարյական հետևանքները: Գաղտնի գինապահենատների մատնության հետևանքով, քննամու ձեռքն է անցնում Վանի դաշնակցական կազմակերպության՝ մի քանի տարիների լարված ու տքնածան աշխատանքի արդյունքը՝ հարյուրավոր իրացաններ, 600.000 փանդուշտ, հարյուրավոր կիրոված պայյուցիկ նյութ, վառող և այլն: Բանտ են նետպում նաև կազմակերպության շատ դեկավարներ: Ոչ միայն Վանի դաշնակցական կազմակերպությունը, այլև հայ ազատազրական շարժումը ստանում են հարվածներ, որոնց հետևանքները հետագայում էլ զգացնել էին տախ:

Դավոյի ահարեկումը կենսական անհրաժեշտություն էր: Այն, վրիժառությունից բացի, նաև բարոյա-հոգերանական մեծ նշանակություն ուներ ճնշված վիճակում գտնվող Վանի հայության համար: Ի վերջո, 1908 թ. մարտի 10-ին, վրեժմանը կամ այլ ակտը փայտում իրականացնում է 18-ամյա Տաճաս Թերեթնեղանը:

Արևմտահայ իրականության մեջ հարյուրներով են հաշվվում ներազգային կյանքում իրազանացված անհատական ահարեկումները: Յափոր, դրանց մեջ եղել են նաև դեպքերի հետագա ընթացքով շարդարացված ահարեկման օրինակներ: Ժամանակի ընթացքում չեն հաստատվել առանձին անձանց ներկայացված մեղադրանքները: Սակայն չին դեպքերը, երբ դափանանություն էր համարվում պարզապես զգուշափրությունը, այլախոհությունը և պայյարի արմատական գործեակերպը չափատպանելը: Որոշ դեպքերում ահարեկումը դառնում էր միջականացված հարաբերությունները պարզելու միջոց, ավելի սրբություն նիշն, առանց այդ էլ ոչ բարեկամական հարաբերությունները: Այլ կերպ ասած, միշտ չէ, որ ահարեկշաման ծեռնարկները արդարացված էին և ժամանակի հրամայականն էին հանդիսանում: Նման շարդարացված անարեկումների բվինք պնտը և դասեա, օրինակ Արամ Արամյանի կոտմից Խաչատուր Կերեքյանի ահարեկումը Կարինում, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ս. Օրմանյանի ահարեկման անհաջող փորձը 1903 թ. հունվարի 6-ին Գում Գափուի եկեղեցուն և այլն: Անշուշտ, բոլորական դաժան իրականության պայմաններում, երբ յուրաքանչյուր հապաղում ու վրիժում կարող էին ծանր անդրադառնալ ազատազրական պայյարի ընթացքի վրա, իսկ ճշմարտության լիովին բացահայտումը կամ անհնարին էր, կամ էլ տևական ժամանակի հարց, ոժվար էր ազատազրական պայյարի գրու կանգնած ու մերից պահանջել բացարձակ անխալականություն այնտեղ, որտեղ թույլատրելին ու անբույլատրելին, արդարացվածի ու չարդարացվածի միջն սահմաններն անորոշ էին, հաճախ՝ պարզապես անաւեսանելի: Ուստի, նման վրիշումներով հանդերձ, ներազգային պայմաններում գործադրված ահարեկությունն ամբողջությամբ վերցված, արդարացվում էր: Հիմնված լինելով ինքնապաշտպանական սկզբունքների վրա՝ այն իր յուրաքանչյուր հաջողական այլ հայկական պայմաններից իրավունք ունենալու համար հաջողության հույս ունենալ որնէ ազգային- ազատազրական շարժում, այդ թվում նաև հայեականը:

Ինչ վերաբերում է արտաքին-քաղաքական ահարեկմանը, ապա հայ ազատագրական շարժմանը ինց սկզբից կանգնում է նրա առանձին ձևերի կիրառման հարցում տարբերակված մուտքում ցուցաբերելու անհամեշտուրյան առաջ: Օսմանյան կայսրությունը հայ ազատագրական շարժման դեմ պայքարում իր համար գենք էր ընտրել զանգվածային ահարեկման բաղադրականությունը, փոքրելով այդ եղանակով կանխել Հայության հարցի բնական և արդարացի լուծումը: Այդ զանգվածային ահարեկման արդյունքներն էին 1894-1896 թվականների համեյան ջարդերը, ապա Առաջին աշխարհամարտի արքիներին իրականացված Մեծ Եղեռնը: Ազգունըրքնեն այլ էր հայ ազատագրական շարժման վերաբերմունքը զանգվածային ահարեկման հարցում: Ազատագրական շարժման ողջ ընթացքում հայ քաղաքական ոչ մի հոսանք կամ կուսակցություն, մտրով անզամ շանցկացքեց դիմել զանգվածային ահարեկման: Իրավացի է Խորենը, երբ գրում է, որ դրա «...պատճառը պետք է որոնել ոչ այնքան հայ ժողովովի անկարողության կամ միայն մարդասիրական զգացմունքներին տարուած լինելու մեջ, այլ զլաւուրապես այն սկզբունքին մէջ, թէ յոթի վարչութեանց պատասխանատուրինը ոչ թէ զանգուածն է, այլ իշխանութիւնը»¹: Հայ ազատագրական շարժումը զանգվածային ահարեկման հարցում առաջնորդվում էր այն սկզբունքով, որ այն ոչ միայն աննպատակ է ու կորսատիք, այլև հակամարդկային բարբարություն է: Եվ պատահական չէ, որ Խանասորի ահարեկչական ու պատժիչ արշավանքի օրերին հայությունը ստեղծում և այսօր էլ առանձնակի հավաքառյամբ երգում է «Կանանց երեկ ձեռք տալու չէ վրեժնենիք զան ֆիտան» տողերը:

Սկզբնապես միանշանակ ձևով չի ընդունվում նաև թուրք պաշտոնյաների անհատական ահարեկման խնդիրը: ՀՀԴ առաջին ընդհանուր ժողովում՝ 1892 թ., երբ քննարկվում էին մարտափարության հարցեր և երբ ակնայալ էր տվյալ պայմաններում ընդհանուր պասամբուրյան անհարդինությունը, պաշտօնյաների անհատական ահարեկման առաջարկով հանդին եկավ Կարմիր պատգանապով Արամ Արամյանը (Աշուտ-Մարտո): «Այդ բոլորի վոխարեն, - պետք է նա, - պետք է ընդունել գործունեութեան մի այլ միտոն, այն է՝ անհատական տեղոր, ուղղված կառավարութեան կեղերից պաշտօնեաների ու ամէն մի ճնշողի դէմ: Թող տեօրիսափ պարտք լինի վերջ դեռ լուսատրմերի կեանքին և սպանութիւնը կատարելուց յետոյ երբեք փախուստ չտալ,

¹ Ռուրիկ, Աշլ. աշխ., հ. 1, էջ 94:

այլ կանգնել տեղնուտեղը եւ յայտարարել, որ ինքն է կատարողը, առանց որիշների մասնակցութեան եւ դրույթան, որպեսզի իր պատճառով չվնասեն որիշները, շատ անգամ ամրող գիտելոր ու համայնքներ»²: Սակայն, Ըրբառափոք Սիրայելյանի վկայությամբ, ընդհանուր ժողովը մերժել է Արամ Արամյանի վերոհիշյալ առաջարկները²:

Նման գործեակերպից ձեռնպահ են ննում նաև ազատագրական շարժման մասնակից մյուս ուժերը: 1890-ական թվականների առաջին կեսին, ընդիանուր առմամբ, զգուշափոր վերաբերմունք կար այս հարցում: Կույր ահարեկունք, որն է պաշտոնյայի ոչչացումը միայն այն բանի համար, որ նա պաշտոնյա էր և ներկայացնում էր ատելի բռնապետությունը, համարվում էր անքույլատրելի և անհարի ազատագրական պայքարի մաստակներին: Այդ կարգի ահարեկունքը ոչ միայն անքույլատրելի էր՝ զուտ մարդկային առունով, այլև խիստ վտանգավոր՝ իր հետևանքներով: Եթե, այնուհանդերձ, լինու է էին նման ահարեկման առանձին օրինանքներ, սպառ դրանք, որպես կանոն, ուղղված էին լինու ոչ քարձասահիճան թուրք պաշտօնյաների, ոսպիկանների, ոչ հայազգի լրտեսների, իսկ Արևմտյան Հայաստանում նաև՝ առանձին քրերի դեմ, որոնք, մինչ այդ աշքի էին ընկել դամանությամբ կամ մասնակից էին հայության դեմ կատարված հանցագործությունների:

Այս իրավիճակում թերևս, բացառություն պետք է համարել 1895 թ. մայիսին մեծ տերությունների կողմից Արդուկ Համբիին ներկայացված բարենորդությունների ծրագրին հաշորդած լարված սպասման մքնլորտում դաշնակցական ահարեկինների կողմից 1895 թ. սեպտեմբերի 20-ին Տրավիդոնում Վանի կուսակալ Բահրի փաշայի ահարեկման փորձը, որի հետևանքով նաև Տրավիդոնի գիճնորդական հրամանասար Ֆերիկ փաշան փիրավորվեցին: Մի կողմ բռնելով այդ ճննարկի իրականացնան հետ կապված զուտ տեխնիկական ընույթի հարցերը, նշենք, որ նպատակահարմարության տեսանկյունից այն արդարացված չէր: Դրանից ընդամենը երեք շարաք առաջ, տեղի մուտքաման ամրությի խիստ գրգռվածության պատճառով, Տրավիդոնի դաշնակցական կոմիտեն վերջին պահին խելամտորեն հետաձգել էր Հայաստանի «բարենորդիչ», հայկական ջարդերի կազմակերպիչ Շաքիր փաշայի ահարեկումը, որն այդպես էլ չիրագործվեց: Նման պայմաններում մեկ այլ, թեկուզ ջարդարար քարձասահիճան պաշտոնյայի ահարեկումը, այն էլ Վ. Պոլսում տեղի ունեցած Բար Ալիի դեպքերից ընդամենը 2-3 օր հետո,

¹ «Դրոշակ», 1899, Ն 8:

² Տե՛ս Անդր Գիղուտ:

սպասնում էր կայծի դեր խալալ: Թուրքական իշխանություններն օգտագործեցին այդ դեպքը Տրավիզոնի հայության՝ մի բանի օր անց տեղի ունեցած ջարդն արդարացնելու համար:

Արդարացված շհանարելով Բահրի փաշայի ահարեկման վորձը, անհրաժեշտ ենք համարում թիգծել սակայն, որ այն Տրավիզոնի հայության ջարդերի պատճառը չէ: Այդ ահարեկումը կարող էր այնպես էլ տեղի չընենալ, եթե Բահրի փաշան և Պոլսից վերջին պահին Տրավիզոնում մնալու իրահանգ շտանար և շրողներ իրեն և. Պոլսի տանող իտալական նավը¹: Բար Ավիի դեպքերից ինտո, Արևմտյան Հայաստանում և հայրանակ այլ վայրերում սկսված զանգվածային ջարդերի պայմաններում այլ փաստը, կարծում ենք, ավելի բան խոսուն է, և լրացոցից նեկարանության կարիք չի զգում: Տրավիզոնի հայության ջարդը, ինչպես և հայրանակ մյուս վայրերի ջարդերը, կամ խորչված էին, իսկ նման դեպքերում տորի գտնելը դժվար չէ:

Բահրի փաշայի ահարեկմանը հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանի տարածքում չենք հանդիպում վրիժառության նպատակներով բարձրաստիճան րուրք պաշտոնյաների անհատական ահարեկման դեպքերի: Դա բացատրվում է ոչ բենանով, որ նման պատժի արժանի, հայության դեմ դաժան արարքներով աշխի բնկած պաշտոնյաներ չկային, բնիկականակար, հատկապես 1894-1896 թվականների իրավարձություններից ինտո նման անձանց թիվը չափից ավելի շատացել էր, այլ այն հանգամանքով, որ ահարեկման նման ձնը Արևմտյան Հայաստանի կոնկրետ պայմաններում համարվում էր ոչ նպատակահարման և անցանկալի: Եթե այդ տարիներին նենք այսպես տեսնում էլ ենք արտաքին ահարեկման օրինակներ, ապա դրանք, որպես կանոն, սահմանափակվում են բնեկերի, աղաների և ստորին պաշտոնյաների, համեմատարար, նեղ շրջանակով: «Դա առաջին երրին բացատրվում է նրանվ, որ րուրդ ցեղաքետի կամ աղայի ահարեկումը համեմատարար ավելի մեղմ էր ընկալվում իշխանությունների կողմից, քան բուրք պաշտոնյայինը: Եվ երկրորդ, որ Արևմտյան Հայաստանի տարածքում ենց բրդական վերնախանը և գլխավորապես հանդես գալիս հայությանը տնտեսապես հարստահարողի և հոյոյ ազատազրական շարժման հակառակորդի դերում: Հետեւարար, ենց նրա առավել դաժան ներկայացուցիչների դեմ պետք է ուղղվեր հայ վրիժառովի արդարաբառ ձեռքը: Նման ահարեկումները որոշ շափով զգաստացնում էին բրդերին, նրանց աղաներին ու բնեկերին հարկադրում ավելի զգույշ լինել և սահմանափակել իրենց հայ

1 Տե՛ս «Դրոշակ». 1902. N 5:

հպատակների կողերում:

Այսպիսով, իրենց պատժի, հետևանքներով հանդերձ, բրդական վերնախակի առավել դաժան ներկայացուցիչների ահարեկումը անդամաթշտ էր և նպատակահարմար: Այս տեսանկյունից էլ պեսոք է զնահատել Նորադրություն Շաքիր աղայի, Աղրյուր Սերոբի դահիճ Բշարե Խալիլի, Ջորաննենց Շերիֆ աղայի, Բալարջի աշխիքապետ Հաճի Ֆերո աղայի, Մշշուն հայության դահիճ Խալիլ Եֆենդոյ և տասնյակ այլ մեծ ու փոքր աղաների ու բնեկերի ահարեկումները:

Ինչ վերաբերում է նման ահարեկումներին պարտադիր հաջորդող պատժի գործողություններին, ապա պեսոք և ընդունել, որ ազատազրական պայքարի լինքացորում գործերն անխուսափելի էին: Առանց դրանց Օսմանյան կայսրության դեսու ոչ մի ժողովուրդ ազատություն ձեռք չէր բերել, և հայերը երջանիկ բացառություն չին կարող լինել:

Օսմանյան կայսրությունում հայկական ահարեկչությունն, այնուհանքերձ, չափանանակալվեց տուկ ինքնապաշտպանական ու վրեժինդարական շրջանակներով: Եղան նաև պետական խարիսխների խարիսխան նպատակով կազմակերպած հարձակողական ու ցուցական բնույթի ակտեր, որոնք կազմակերպաման ծավալներով, հարվածի բափով և լունցած արձագանքներով զափս էին նաև ազնացնելու պայքարի՝ մինչ այդ եղած ամենահեղուղուն ու երբուսական դրվագները: Էությամբ վրեժինդարական լինելով հանդերձ, դրանք դրուս էին գալիս զոտ ինքնապաշտպանական շրջանակներից և փոքրում դառնալ Հայկական հարցի լուծման ազգու միջոց: Նման ծեննարկներին բնորոշ էին որոշ բնիկանությունը գծերը:

Դախուն դրականացման վայր էր ընտրվում ոչ թե բուն Արևմտյան Հայաստանը, այլ Օսմանյան կայսրության սիրալը՝ Կ. Պոլիսը և մասամբ ծովեզրյա կենարունները: Դա բացատրվում էր ազատագրական շարժման այլ շրջանին բնորոշ ռազմավարությամբ: Ազատագրական պայքարի զմիւս կանգնած ուժեր՝ հեշալյանները, ապա՝ զանակցականները, հայկական բարենորոգումների իրականացումը կապում էին մուրքինի զորդերին մեծ տերությունների անմիջական միջամտության հետ: Հայկական հարցը կարճ ժամանակում լուծելի հարց էր համարվում և բավարար էր համարվում արտաքին միջամտության իրակրում՝ դրա արագ լուծման համար: Կ. Պոլիսը և ծովեզրյա բազաները, որտեղ առավել սերտ էին միահյուսված մեծ տերությունների լունտեսական ու բաղարական շահերը և որտեղ յուրաքանչյուր փոքր միջադիմակ անգամ, անմիջապես արձագանք էր զտնում Եվրոպայում, հարմար էին հանդապում ուժերի ու միջոցների նվազագույն վատնումով ցան-

կալի միջամտուրյունն առաջ բերելու համար: Մինչդեռ Արևմտյան Հայաստանում կատարվող դեպքերը, հետևանքներից ու ծավալներից անկախ, բավականին ուշ և խղճուկ պեսքով էին արձագանքվում Եվրոպայուն և չին կարող միջամտուրյուն դրդողի դեր խաղալ:

Երկրորդ, ահարենչական այդ ձեռնարկներն իրականացնելիս առողջին անգամ և մեծ չափերով օգտագործվում են ռումբեր, ուժանակ և այլ պայքարցիկ հյութեր, որոնցից մինչ այդ հայ հեղափոխականները, հատկապես դաշնակցուրյունը, խոսափում էին և որոնց ավելիշ հետևանքներն են և հոգեբանական ազդեցուրյունը ավելի քան զայի էին:

Վերջապես այդ ձեռնարկներին ընորոշ էր մասշտարականուրյունը: Դրանցից յուրաքանչյուրն առնվազն մի քանի ամիսների տրնաշան աշխատանքի ու զգակի նյութական միջոցների ծախսան արլցունը էր և նախատեսում էր միաժամանակ կամ միջինաց հաջորդող, զբերե հավասարաթեր մի քանի հարվածներ, որոնց տեխնիկական հստակ իրականացնումը կարող էր հանդեսնել վիրիսարք ավելիշ հետևանքների:

Նման ձեռնարկներից առաջինը և ամենանշանակուր Օսմանյան դրամատան գրավունը և դրան ուղենքող ռումբային կրիվներն էին Կ. Պոլսում: Ի՞նչ էր այն՝ վրեժներդական աշխատ, արտաքին միջամտուրյուն երակորդ դաշտարական, ահարենչական միջոցառութեան, թե՞ ապատամուրյուն օսմանյան բռնապետուրյան դեմ: Այլ հարցը պարզելու համար անհրաժեշտ է անդրադառնալ այն բռնիանուր բարյալ-հոգեբանական մընդորտին, որուն գտնվում էին արևմտահայուրյունը և հայ ազատագրական շարժումը այդ զաղափարը հեղանարու պահին:

1895-1896 թվականներին, հայ ազատագրական շարժման դեմ պայքարի ընթացքում, Արդուկ Համբիլը գործնականի է վերածում բուրքական պետուրյան կորմին ավելի քաղ որդեգրված ցեղասպանուրյան բարդականուրյունը: Այդ պայմաններում է, որ հեղացում է զաղափարը: Եվ նախապես այն չէր կարող լինել որևէ այլ քան, բացի վրեժի զաղափարից: «Երբ 95 և 96 թվականներին արյան մի ամբողջ ծով էր պատել Հայաստանին, գրում է Քիլիստափոր Սիրայիւյանը, - և երբ հայուրյունը, եթե նա ստրկածին արարածների մի զանգված չէր, պիտի բռնկված լիներ վրեժի միտու հասկանալի զգացմունքով, պիտի դառնար վրեժի մի անվերջ աղաղակ, այդպիսի մի վայրկյանուն, ասում ենք, լուրյունը պիտի նշանակեր միայն և միայն ամբողջ ազգի կատարյալ բարյալ-հոգեբանական անկումը և հեղափոխական շարժման կատարյալ սնանկուրյունը»¹:

Վրեժ: Այդ էր պահանջում Երկրում և արտասահմանում գտնվող այն

1 Զ. Սիրայիւյան. Հեղափոխականի մոքերը. Երևան, 1990, էջ 59-60:

զբուակից երիտասարդուրյունը, որի համար քանի էր Հայունիքի ու հայուրյան զաղափարը: Դա խոստովանում է նաև Օսմանյան դրամատան գրավման ապագա դեկափաներից մեկը՝ Արմեն Գարոն. «...Ինձ համար անկարելի էր անտարբեր համդիսատեսի դերին մեջ մնան, երբ մեր ցեղին գրյուրեան խնդիրն էր որուած, - գրում է նա, - ուստին կը բռնմէի վրեժնեղութեան համար...»: Նա վկայում է նաև, որ Կ. Պոլսում ուժանակի ու ռումբերի գործածուրյամբ վրեժնեղութեան ակտ կազմակերպելու զաղափարը ծնվել է դեւն 1895 թ. դեկտեմբերին նոյն տարվա հոկտեմբեր-նոյեմբերի ամիսներին տեղի ունեցած շարդերի անմիջական ազդեցուրյան տակ²:

Նախավետ ծցքաված պլան չկար: Ըստ Երևույրին, սկզբում որպես հայ վրիժառապերյան թիւախ նկատի է առնվել հայկական ծարդերի կազմակերպիչը³: Մեծ մարդասապանը:

Ա. Վուաճյանը (Օնիկ Դերձակյան) վկայում է, որ Եզիփատացին (Արտաշեն Դեմյան), որը մինչ այդ մեծ դեր էր խաղացնէ Կ. Պոլսում ահարենիւնների կազմակերպման ու իրականացման գործում, մշակել էր 1896 թ. ունագանի 15-ին Արդուկ Համբիլին ուումքով ոչնչացնելու ծրագիր: Շնայած բոլոր պատրաստուրյուններն արդեն ավարտված էին, սակայն Դաշնակցուրյան՝ Կ. Պոլսի Կենառողմանական Կոմիտեն ի վերջու հրաժարվում է այն ծովագիրից⁴: Հավանություն չեն սուսնում նաև արևնոյան նայրաբարպերում բուրքական դեսպանատերը պայթեցնելու և Կ. Պոլիսը իրդեհելու զաղափարները: Վերջինս մերժվում է որպես չափազանց անողոր մտահացում⁵: Ի վերջո, հասունանում է այն զաղափարը, որ Կ. Պոլսում հասցվող հարվածը պետք է դիմայի ոչ միայն բուրքական պետուրյան, այլև՝ Եվրոպական կապիտալի շահերին: Նպատակը՝ առաջ թերեւ կերպարական միջամտուրյունը ի շահ Հայկական հարցի լուծման: Այսպիսով, նախապես սուկ վրեժներդական ներարկուում ժամանակի ընթացքում ծնոր է բերում նաև բաղաբական նպատակապետուրյունը:

Արդյունքում մշակվում է Օսմանյան դրամատան գրավման ծրագիրը: Այն մտահացողները գտնում էին, որ իրականում Եվրոպական հաստատուրյուն հանդիսացող դրամատան գրավումը և այն պայթեցնելու պատմակիրը բավական էին Եվրոպական ուազմանավերից զորք ափ

1 Արմեն Գարո, Ապրուած օրին, Թուարուն, 1948, էջ 73:

2 Տե՛ս նոյն գրքուն, էջ 102-105:

3 Տե՛ս «Դրօշակ», 1897, N 13:

4 Տե՛ս Ս. Վարամիշյան, Աշխ. աշխ., էջ 131, 148:

հաներու, Կ. Պոլիսը գրավելու և Հայկական հարցին ցանկալի բածում տալու համար: Համոզված լին, որ հաջողության դեպքում 24 ժամվա ընթացքում ցանկալի միջանորդությունն ապահովված կլինի: Չափազանց միաժիշտ տեսակնա, որը սակայն, ազատագրական շարժման դեկապարների այդ շրջանում ունեցած հայացքների արտացոլումն էր: Դրանաւան գրավման հետ միասին և միաժամանակ նախատեսված էին նաև ոճքային ահաբեկչական հարձակում Սամարիայի գորանոցի վրա, Ղալաթիայի կամքջի վրա Սատրապամի կառի ունշացում և ոճքային հարվածներ դեպի դրամատուն շարժվող զորքերի²: Դա մի վիրհսարի դավադրական-ահաբեկչական ծեռնարկ էր, որն իր ծավալներով չափից ավելի հսկայական էր՝ ոստիկանորդյան և անենոր վիստացող լրտեսների աշքից մինչև վերջին պահն աննկատ մնալու համար: Աչքի է արդուս հատկապես Սամարիայում կատարվող եռուցեղը: Ոստիկանորդյունն ու զորքերն այսուղ նախահարձակ են լինում, կատարելով խուզարկություններ և ծերբակալություններ: Սակայն դա չի կանչում զիշավոր հարվածը:

1896 թ. օգոստոսի 14-ին դաշնակցական 26 մարտիկներ՝ Բարկեն Սյունու (Պետրոս Փարյան) առաջնորդությամբ, ուումբերով ու աստրանակների գինաված, գրոհում են Օսմանյան դրամատան վրա, գրավում այս կոլվմերի ընթացքում հսկայական կորուստներ պատճառելով զորքերին, ոստիկանորդյանն ու խուզենին: Դրամատուն 13 ժամ գտնվում էր հայ մարտիկների ծեռություն: Այն զրավեր պահին գոնիվում է Բարկեն Սյունին և դեկապարությունն անցնում է Նախին գրողատանտական դպրոցում ուսաւը կիսատ բոլոր և վիեժմարդական նախակներով Կ. Պոլիս անցած Հրաշին (Հայկ Թիրաքըան) և Արմեն Գարոյին:

Դրամատան գրավումից հետո 6 մեծ տերությունների դեսպաններին է ներկայացվում ՀՀՀ Կ. Պոլիսի Կենտրոնական Կոմիտեի հայերեն, ֆրանսերեն ու բրուրերեն լեզուներով շրջաբերականը. «Մեր արիմալ սրբագրությամբ մեր պահանջներուն կորայ իրմա միանալու և սրբազն վրեժի սենուն զարափարը, որ սև որուականի պէս արձանացած է մեր աշքերուն առջև, - մասնավորապես ասկում էր նրանում, - Դիանագիտական խաղերու ժամանակն ալ անցած է: Մեր հորիդ-հազար նախատակներուն քափած արինը մեզի իրավունք կուտայ ազատությին պահանջելու»³: Պահանջվում էր անմիջապես Արևմտյան Հայաստանում

¹ Տե՛ս Արմեն Գարօ, Աշկ. աշխ., էջ 107-108:

² Տե՛ս Անոյա Վեհրուն, էջ 108-109:

³ «Դրաշակ», 1896, N 20:

գործադրել յսոստացած բարենորդությունները: Իրենց հերքին, բանկը գրավողները ներկայացնում են ինսենյուլ պահանջները.

1. Միջազգային միջամտությամբ ապահովել ամբողջ Երկրի խաղաղությունը:
2. Ընդունել բարենորդությունների վերաբերյալ ՀՀՀ Կ. Պոլիսի Կենտրոնական Կոմիտեի բոլոր պահանջները:
3. Ուժ չգրիժադրել բանկը գրավողների դեմ:
4. Կյանքի լիակատար ապահովություն տալ ինչպես բանկում գտնվողներին, այնպես էլ Կ. Պոլիսի այլ մասերում կորիների բոլոր մասնակիցներին:

Խոստանալով, մինչև իրենց պահանջների կատարումը, անվճառ պահել դրամատան կայրը, դրամը, ինչպես նաև պատանդ վիճակում գտնվող 157 ծառայողներին, դրամատունը գրավողները, հակառակ պարագայում, սպառնում էին պայքնեցնել այն իրենց հետ փրատակների տակ բողներով ամեն ինչ:

Սպառնալիքն ավելի քան ազդեցիկ էր, և ի վերջո գործին միջամտում է միջազգային դիվանագիտությունը՝ ի դեմ Կ. Պոլիսի ոտաւական դեսպանատան առաջին բարգման Մարտիմովի: Միջամտում է, ոչ քե Հայկական հարցին լուծում տալու, այլ Արորոյ Համբիին մեկ անգամ և ծանր վիճակից հանելու համար: Հայ Վրիժառուներին հասկացվում է, որ անիմասաւ է միջազգային ուսագական միջամտություն սպասելը: Մարտիմովը խոսափողական դիրք է գրավում նաև քարենորդությունների հարցում, հայտարարելով, որ առանց իր մյուս պաշտոնակիցների համաձայնության, չի կարող նման խոստումներ տալ: Դրամատունը չքողնելու և պայքեցնելու դեպքում նա հայ հեղափոխականներին սպառնում է նույն գիշերն իսկ սկսելիք հայկական ջարդերով և Հայկական հարցի հանդիպական Եվլուսայի՝ միշն այդ բարյացացակամ վերաբերմունքի փոփոխությամբ: Ի վերջո, բավարարվելով բարենորդությունների հարցով գրադիվու և Կ. Պոլսում հայկական ջարդերը կանխելու Մարտիմովի խոստումներով՝ հայ Վրիժառուները բողնում են դրամատան շենքը և փոխադրվում օտարերկրյա նավերից մեկը: Հաջորդ օրը նրանց այցեկած ուսու, ֆրանսիացի և անգլիացի դիվանագետները արդին միանգանայն այլ լեզվով էին խոսում մոռանալով նախորդ օրը տված խոստումները: Հայ հողագործականները դառը խոսախարության բոպեներ ապրեցին:

Ամեն ինչ անդառնալիորեն կորած էր, և նոյն օրն իսկ ֆրանսիական «Ժիրոն» շոգենավը նրանց հեռացնում է Կ. Պոլիսից: 18-ժամյա հերո-

¹ Տե՛ս Առյու լինուս, N 21:

սական պայրարից հետո դադարում են նաև Սամարիայի ռումբային կոկները՝ հայ հողափոխականների փաղանգից խելով հերոսական նոր անուններ: Եսկ որպես պատասխան, Կ. Պոլիխը նորից ականատեսք դարձավ սուրանի կողմից հրահրված հազարավոր հայերի ջարդերին:

Ի՞նչը դրեց Օսմանյան դրամատունը գրաված հայ մարտիկներին այրան հեշտությամբ զիջել դիրքերը և խարվել զիվանագիտական խաղաղին: Անզիական դեսպանի տեղակալը դա բացատրում է սովոր սպառնալիքով, քանի որ վրիժառուները, համոզված լինելով եվրոպական միջամտուրյան հարցում, ուտենիվ չեն վերցրել իրենց հետ: Հրաշ թիրաքյանը դրամատունը արագ բողնելը բացատրում է Կ. Պոլսում սկսվելով ջարդիկ պատասխանատվությունն իրենց վրա չափելով ծգոժամբ: Սակայն, կարծում ենք, որ անոնին էլ երկրորդական դեր չի խաղացել նաև այն հանգամանքը, որ, ինչպես խոստովանում է Արմեն Գարոն, դրամատանը գտնվողները չեն տեսել բավարար համակուրյամբ ուժանակ՝ անհամեշտորյան դեպքով իրենց ապանավիրք իրագործելու համար²: Հրաշ թիրաքյանի դեպքերից անմիջապես հետո «Դրշակ»-ում տպագրված հուշերում այս հանգամանքը կարող էր հասկանալի պատճառներով շրջանցված լինել: Դրամատան գրավումը նախապատրաստողների համոզմունքներին ծանոք լինելով, ինչպես հնարավոր պետք է համարել Արմեն Գարոյի խոստովանությունը, քանի որ, ամեն ինչ հաջող ավարտվելու գեաքրում, ուժանակի գործածուրյան կարիքը չպետք է զգացվեր: Բայց, ընդամենը մի քանի ժամկան ընթացքում, դաժան իրականությունն արդին որերորդ անգամ գալիս էր ճշգրտելու և պրագելու հայ հեղափոխականների համար անհայտ ճշմարտուրյան համարվող զաղափարները: Օսմանյան դրամատունը գրավող հերոսները և նրանց հետ հայ ազատագրական շարժումը ստանում էին ծանր, քայլ անհրաժեշտ դասեր:

Դրանցից առաջինն այն էր, որ անգամ ամենահամարձակ հերոսական ու մեծածավալ ծենոնարկը, անկախ նրա արդյունքներից ու արձագանքներից, չեր կարող միջազգային ռազմական միջամտուրյան պատճառ դառնալ և լուծում տալ Հայկական հարցին, եթե տվյալ պահին դրանով շահագրգոված չեն մեծ տերությունները:

Երկրորդ, ակնհայտ դարձավ նաև, որ անհնարին է կարծ ծամանակում Հայկական հարցի լուծումը և որ հայ ազատագրական պայքարն այդ խնդրի իրականացման համար հարատն պետք է լինի:

1 Տե՛ս Լիօ. Թիրուահայ յիղափոխուրիան զաղափարաւորիմը, հ. Բ, էջ 27:

2 Տե՛ս Արմեն Գարօ. Աշվ. աշի. էջ 134:

Այս ճշգրտումներն էր անում հայ ազատագրական շարժումը Օսմանյան դրամատան դեպքերից հետո:

Ինչ վերաբերում է Կ. Պոլսում տեղի ունեցած դեպքերի միջազգային արձագանքներին, ապա միայն բարոյական սփոփանը պետք է համարել հայ վրիժառուների անձնի իրույսանը, խիզախուրյանը և ազնվուրյանը նվիրված այն մի քանի հայանպատ հորվածները, որոնք տպագրվեցին եվրոպական նամակի օգաններում: Դրանք զալիս էին ճշմարտուրյունն ասելու կատարված դեպքերի մասին, քայլ ոչինչ չին ավելացնում Հայկական հարցի լուծման գործնականին:

Այնուհետեւ, Օսմանյան դրամատան գրավման հետ կապված դեպքերն ունեցան նաև գործնական հետևանքներ: Հայ վրիժառության հարվածները, և դրանց արդյունքում Օսմանյան դրամատան առջև, Սամարիայում ու Կ. Պոլսի այլ մասերում փոփած թուրք գինվորների հարյուրավոր դիմակները զալիս էին մեկ անգամ ևս, ի լոր անենքի, ազգարարելու, որ հայ ազատագրական շարժումը մեռած չէ, որ հայուրյունը նորից պայքարում է իր հարցի դրական լուծման համար:

Օսմանյան դրամատան գրավման դեպքը որոշ փոփոխություններ նոցրեց նաև մեծ տերությունների վերաբերմունքի մեջ: Ծատերը հակված էին կատարված նախնագանցքը համարել այն դեպքերի, որոնք սպառնում էին ցնցել Կ. Պոլիխը: Անզամ լուրեր էին տարածվում մեծ տերությունների՝ Կ. Պոլսի դեսպանատները պայքեցնելու պլանի գոյության մասին: Չնայած Դաշնակցության Կ. Պոլսի Կենտրոնական Կոմիտեն հատուկ հայտարարությանը հերքեց այդ լորերը, սակայն դրանք անհետանք չմնացին: Ավելի վճռական ու կշշտ դարձավ մեծ տերությունների դիրքությամբ Արդուլ Համբիդի նկատմամբ՝ հայկական ջարդերի հարցում: Դա հարկադրեց սուլթանին հրաժարվել նոր ջարդերի կազմակերպումից: Մինչև Ադամայի 1909 թ. դեպքերը հայկական զանգվածային ջարդեր այլևս տեղի չեն ունենում: Անզամ Խանասորի արշավանքի օրերին՝ 1897 թ. օգոստոսին, երբ դաշնակցական ահարենիշների կողմից քուրքական կառավարությունը ոչնչացնելու նպատակով Կ. Պոլսում պայքեցվում է Բաք Ալի ոռոմը և նույն օրը կատարվում են Օսմանյան դրամատունը պայքեցնելու, ինչպես նաև Քերայի կառավարական տաճ առջև ոռոմ պայքեցնելու փորձերը, սուլթանը գերադասում է ձեռնպահ մնայ, թեն նախկինում նման առիթներն, անկասկած, կօգտագործեր նոր ջարդեր կազմակերպելու համար:

1895-1896 թվականների իրադարձությունները (Զեյրունի ապստամբուրյուն, Վանի ինքնապաշտպանություն, Օսմանյան

դրամատան գրավում և այլն) հայ ագրուագրական զինված պայքարի բարձրակետն էին: Եթե մեծ տերությունների վրա դրանք սպասված ազդեցություն չեն ունենում, ապա թուրքական պաշտոնական շրջանների և ընդիմադիր ուժերի համար ակնհայտ է դառնում, որ հայ ազգությական շարժումը Օսմանյան կայսրությունում դարձել և սազմական ու քաղաքական լուրջ գործոն, որը հնարավոր չէ անտեսել: Դա հարկադրում է Արդու Համիդի¹ իր կառավարման ողջ ընթացքում թերևս միակ անգամ, քանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ: Օսմանյան դրամատան գրավման դեպքից շատ չանցած՝ 1896 թ. աշնանը, երա կորմից Եվրոպա ուղարկված պատվիրակ հայկական նախաճներում քարենորդումներ մատցնելու խստամեծեր է տայի՛ զինված պայքարը դաշտեցնելու պայմանով: Հատկապես պնդվում էր, որ դաշտեցվի ուժերի գործածությունը Կ. Պոլսում: Հատկանշանական է, որ միառժամանակ սահեցված քանակցությունները բարերի կոռսից վերսկվում էն 1897 թ. օգոստոսյան ուժահարումից հետո: 1896-1899 թթ. Ծննում՝ դաշնակցության հետ, իսկ 1897-1898 թթ. Փարիզում վերակազմյալ հնչակյանների հետ Արդու Համիդի ներկայացուցիչների վարած քանակցություններն արդյունք չեն տալիս: Սուրբանը չի կատարում հեղափոխականների առաջադրած նախանական պայմաններից և ոչ մեկը: Հանգվելով, որ նա քանակցությունները վարում է ժամանակ շահելու, թուրքայի ներքին գործերին մեծ տերությունների միջամտությունը բռոյլ չալու, խոստացված քարենորդումները շիրականացնելու և վերելք ապրող հայ ազգային-ազատագրական պայքարը արմատախիլ անելու համար, վերակազմյալ հնչակյանները 1898 թ. ինկունքներին, իսկ դաշնակցությունը՝ 1899 թ. նարտին, դաշտեցնում են քանակցությունները²: Սակայն, դրանց տեղի ունենալու փաստն անգամ վկայում է, թե հայ ազատագրական զինված պայքարն, այդ բվում Կ. Պոլսում ուսմբերի և ուժանակի գործածությամբ ահաբեկչական ճեռնարկները որքան անհանգստություն էին պատճառում սուլթանի:

1895 թ. սկսած, Արդու Համիդի դեմ միացյալ ճակատ ստեղծելու նպատակով, հայ քաղաքական կուսակցությունների հետ հարաբերություններ են հաստատում նաև բոլոր ընդիմադիր ուժերը՝

1 Ազերի մահմանամ լրեն Մ. Կոչար, *Армяно-турецкие обществоенно-политические отношения и Армянский вопрос в конце XIX- начале XX веков, Ереван, 1988, с. 41-72.*

երիտրությերը: Հայկական հարցում նրանց որդեգրած անգիշում կեցվածքը, սակայն, խիստ դժվարացնում էր համագործակցությունը: Այնուամենայնիվ, հետագայում հայ քաղաքական ուժերը իմանականում մասնակցեցին Օսմանյան ընդիմադիր ուժերի համաժողովներին համաձայնելով իրենց մասնակցությունը բերել Արդու Համիդի փարակարգ տապալելու գործին:

Օսմանյան պետության իմբրերը ցնցելու նպատակով իրականացված ահարեւական վերջին խոշոր ձեռնարկը Մեծ Մարդասպանին ոչնչացնելու փորձն էր, որը պատմության մեջ մտել է «Երրորի ուում» անունով: Օսմանյան դրամատան դեպքերից հետո էլ հայության շրջանում չեր մարել 300 հազար հայ նահատակների վրեժն առնելու զարգարքը: Արդու Համիդին ոչնչացնելու միտքը շատերին էր հուզում: Թերևս դրանով պետք է բացարել այն հանգամանքը, որը ազատագրական շարժման տեղատափության պայմաններում անգամ, «Գրօշակ»-ը՝ Ակնոնու գրչով վիթեի էր կոչում և «Ժողովրդական Բրուտոսներ» վնասում «արքաբարույունք գործադրելու համար»: Հեշտ չէր, սակայն, այդ խնդիրն իրականացնելու: Ամենքին էին հայտնի Արդու Համիդի վախճկուտությունն ու կասկածամտությունը: 1900 թ. Խոսլիայի Հոմքքարու Ի թագավորի սպանությունից և Փարիզում Պարսկաստանի Նասրեդին շահի դեմ անհափորձից հետո, Խապանիայում անիշխանականների կողմից պատրաստված մի ցուցակ գտնվեց, որում մահվան դատապարտված զահակաների շարքում Հոմքքարուի անունից հետո հիշատակվում էր Արդու Համիդ Ա-ի անունը: Հայսնի չէ, թե ինչ առնչություն ունեին այլ ցուցակի հետ թուրքայի ընդիմադիր ուժերը, այդ բվում նաև հայ հեղափոխականները: Սակայն մի քանի փաստ է, որ դա ավելի ահարենք սուլթանին, որն արգելեց ամեն ուրբար օր անդի ունեցող Սեպանըրի կրօնական արարողություններին ներկա գտնվել իրենց երկրի հյուպատոսի կողմից ստորագրված հանձնարարական չունեցող օտարականական մարդու ու քափանցելու:

Արդու Համիդին ոչնչացնելու խնդիրն իրեն հատուկ անսպառ եռանդում, ձեռնախում է լինում Քրիստոնակ Սիրայկան: Նման ձեռնարկը պահանջում էր հսկայական միջոցներ: Քրիստոնակուն անձամբ է մասնակցում այդ միջոցները հայրայելու գործին: Նրա

1 Տես նոյն գեղում, էջ 73-129:

2 Տես Հ.Յ.Դ. Վարսունական (1890-1950), կազմեց Ս. Վրացյան, Բուրդ, 1950, էջ 130:

դեկապրուբյամբ հայ դրամատւերներից «Ազգային սուրբ»-ի հավաքմանն է ձևանաժողովին լինում Դաշնակցության «Փորորիկ» ահարելչական խումբը: Անդապես, թեկուզ և նեծ դժվարությունների զնով, հավաքում են պահանջվող միջոցները: Այստեղ հարկ ենք հաճարում ենքրեւ թուրք հեղինակ Մուսաբաֆա Թուրանի այն պնդումը, թե իր Օսմանյան դրամատան դեպքը, ապա նաև 1905 թ. Ելրդի մահափոքը հրահանգվել են սփյունստների կողմից, որոնք, իր այդ նպատակով ֆինանսավորել են հայ հեղափոխականներին¹: «Փորորիկ» խմբի գործունեությունն ապացուցում է, որ հայ ազատազրական շարժումը բարոյական ու ֆիզիկական ծանր գործությունների գնով, ինըն էր լուծում իր ֆինանսական խնդիրները:

Գալիս է վճռական պահը և Դաշնակցության Սոֆիայի ընդհանուր ժողովը (1904 թ. հունվար) Կ. Պոլսում ու Խօմիքում ցուցական գործունեությունը վերսկսելու որոշում է ընդունում: «Երկրի շարժումներն անկախ գործ կատարել Վիշապի (Կ. Պոլսի-Հ. Գ.) մեջ այն պարագային միայն, եթե յոյ կայ հյուսակապ ձեռնարկ մը գլուխ թերեւու², ասկում էր ընդհանոր ժողովի որոշման մեջ: Դասով, վաստորեն, հավանություն էր արվում Արդու Համբիկ ահարեկման ձեռնարկին: Ընդհանոր ժողով այլ նպատակով սահմանում է խաչոր ըստից, և Քրիստոնուր գործի է անցնում: Արդու Համբիկ կյանքի դեմ նա հդանում է ազգերի պատմության մեջ արձանագրված ամենախիզախ դաշտություններից մեկը և ինըն է ամրող էռուրամբ նվիրվում այդ հանրության ծենուարկի իրականացնանք: «Աշխարհի հեղափոխական պատմության մեջ զույն դա եզակի դեպքն է,- գործ է Ավետիս Ահարոնյանը,- եթե քաղաքական կուսակցության անփոխարինելի շեքը ինըն է անձամբ նետվում ահարեկունների տուկումների մեջ՝ ուժանակը ծեռքին, եթե նա այնքան ենշտուրյամբ կարող էր իրեն վոլոյարինող ունենալ, ինըն մնացով գերազոյն դեկապարը»³: Սակայն դա անհարի էր Քրիստոնուրի բնափորությանը:

Թուրքիայի, Կովկասի ու Եվրոպայի այլ և այլ անկյուններից իր շուրջը հավաքենով համախոնների մի բազմազգ կուեկտիվ, տարրեր գրադարձնիք ու դիրքի տեր մարդկանց, Քրիստոնուր՝ պատված Սաման տակ, 1904 թվականից մինչև 1905 թ. գարունը անքնիատ

¹ Տե՛ս Հ. Գանգրունի, Հայ յեղափոխությունը օսմանիան բռնադիրութեան դեմ (1890-1910). Թիվուր, 1973, էջ 362-363:

² Ա. Վարսեղիս, Հայ. աշխ., էջ 364:

³ Հ. Միքայելյան, Հեղափոխականի մաքրելը. էջ 10:

շիքում է. Խուրբիայում ու Բայկաններում, ուսումնասիրում միջավայրը և մանսում ծրագրեր: Նրա ծրագրը չէր սահմանափակվում սուլյանի ժահապատմով: Նախատեսվում էր միաժամանակ կամ կարծատն ընթիշտումներով հասցիող հարվածներով խաղաղ աշունաշփորություն առաջ բնրել ւ. Պոլսում ու Խօմիքում, խառնել միջազգային կարծիքը և փորձել այդ կերպ որև. լրական լուծում ապահովել Հայկական հարցի համար:

Վտանգի ներարկելով իր կյանքը, Քրիստոնուրը բազմիցս բափանցում է սուլյանի նստավայրը, ներկա լինում Սելյամլըի արարողություններին՝ ծշտելով ամենաշնչին մանրութ անգամ: Այնուհետեւ, նրան վիճակված չէր իրականացնել իր մտակալացունը, քանի 1905 թ. նարոի 17-ին իր ընկեր Վուաչալսկու Քենտիբյանի հետ ահաստակեց Սոֆիայի մոտ, վիտոշ լեռան լանջերին՝ ձեռնառումքեր փորձարկելիս:

Ծնայած առաջացած վիատուրյանը և Արդու Համբիկի կողմից հսկողության խստացմանը, չորս ամիս անց՝ Ելրդի պարիսպներից ներս ուումբային պայքանն, այնուամենայինվ, տեղի ունեցավ: Զեռնարկն իրականացնելու նպատակով Վիեննայում զնվում և մեծ դժվարություններով Կ. Պոլսի է փոխադրվում արտասովոր շքեղությամբ մի կառը: Սելյամլըի արարողություններին բազմիցս ներկա գտնված հեղափոխականները սուլյանին ոչնչացնելու լավագույն միջոցը ժամացույցով լարվող դժոխային մերենան էին համարում: Պայքուցիկ ասրբը տեղադրվելու էր նշված կառուս, որը պեսար է կանգնեցվեր սուլյանին հեարավորին շափ մնա և անհրաժեշտ պահին պայքեցվե՞ն՝ ող հանելով Մարդասապանին: 1905 թ. հուլիսի 21-ին՝ Սելյամլըի արարողությունից հետո, եթե սուլյանը պետք է վերաբանար պարաւ, նուրինա Արևշանի ծեռարլ լարված դժոխային մերենան դրդյունով պայքեց, ոչնչացնելով կառը, տասայակ մարդկանց, ձիեր ու կառքեր: Չոհիկեց մաս կառը վարող ամարիխացի Զարեկ Խաչիկյանը՝ Օսմանյան դամատունը էր հայտնել պայքել կառի հետ միասին: Սակայն Արդու Համբիկը կենդանի մնաց: Բազմարիվ հաշվումները ցույց էին տվել, որ նա մզկիրից պալատ տանող ճանապարհն անցնում է ուղիղ մեկ րոպե 42 վայրկյանում: Այդ նվատառումով էլ լարվել էր ժամացույցը: Սակայն այդ օրը մզկիրից դրս գալուց սուլյանը մի պահ հապաղել էր՝ խոսակցության բռնվելով շեյս-ուլ-խալամի հետ, և այդ հապաղումն էլ փրկել էր նրա կյանքը:

Փրկվելով հանդերձ՝ Մարդասապանին դեռևս հոգեկան ծանր սալրումներ կին սպասում: Անցնում էին օրեր, բայց այդպես էլ պարզ չէր

դառնում, թե ուժ ծերքի գործն էր կատարված պայքարնը: Մինչդեռ մեկը մշտի և ստից տարածվում էին ֆանտաստիկ լուրեր հեղափոխականների կողմից Օսմանյան դրամատումը, բունելուն ու կամորջները պայքանելու և օդապարիկներով դժոխային մերենաները պայտա փոխադրելու ծրագրերի մասին՝ ավելի սաստկացնելով բռնակալի վախր: Կատարված դեպքերի մասին բավականին հետաքրքիր, թեև ոչ ճշգրիտ բացարձրություն է տախու Արդու Համբիկ եռանդում պաշտպան, բուրք պատուարան Դամբիշմենսու:

«... Ջոմիրաճմերու նպատակը, զրում է նա, - փատիշակը ողը հանել: Եսոք, Բ. Դուռը, Կալաքայի կամորջը, Փաղուին, Օսմանեան դրամատունը, օտար դիսպանատուներու հետ Սեպք ա՛Օրիանը եւ այլ պաշտօնական տեղական եւ օտար հաստատություններս ալ ողը հանելով, չափանակ յառանակութիւն նր հանելով մայրաքաղաքը արինի և կրակի մեջ ճգկով օտար պետութեանց միջամտութեան պահճառ ըլլա և այլ կերպավ Հայկական հարցը լուծել յարեած էին»¹:

Ինքը՝ Արդու Համբիր, պաջին պահին հավաքած էր թշնամուն վնարել ներսում: Նրա իրամանով նույնիսկ ձերբակալվում է զահաժառանց Ուեշատը: Սակայն, ի վերջո, կատարված բազմաթիվ ձերբակալություններից հետո ոստիկանությունը վերջապես գտնում է «Զինզեր» ընկերության պաշտոնյա, անջևսանական, ծնունդով թեզիսից Ժորիի հետքը, որը մահափորձի գլխավոր երեսուներից լր: Նա համարձակութեան խստառքանում է իր մասնակցությունը, սակայն իրաժարվում է մատնել իր հայ ընկերներին՝ տալով միայն մեռածների ու փախածների անունները: Ժորիա դատապարտվում է մահապատժի, սակայն թելզիսի և մի քանի այլ կառավարությունների միջամտությամբ ազատ է արձակվում և վերադառնում հայրենիք:

Դատահականներն բացահայտվում է նաև Քրիստափորի դավադրական ծրագրի երկրորդ մասը: Դրամբ դավադրական մի շաբթ ձեռնարկներ էին, որոնք պետք է իրականացվեն Իօմիրում Ելիզաբեթ մահափորձի հետո, որպակի հաջորդականությամբ: Նախատեսվում էր սուրբանի մահափորձից 8 օր անց սկսել և 8-10 օրվա ընթացքուն ուժանակով պայքեցնել Եվրոպական բուրք հաստատությունները, առաջին հերքին դրամատները, կառավարական պալատը, մաքսատունը, փոստը, երկաթուղային կայարանները, կամորջները և այլն: Այդ բոլոր օրինակները պայքեցնելու համար նախապես էլեկտրական ժամանակություններով, էլեկտրական թելերով և պայքութիւններով կազմ ու

1 Տե՛ս Գ. Եսազդեան. Ապրիլ Համբիր Բ. Կարմիր սովորանը. Թիվորություն, 1980, էջ 416:

պատրիաստ վիճակում էին: Դժոխային մերենա էր տեղադրված նաև Կրեդի Լիոնեկի դրամարկղներից մեկում՝ այն ող հանելու ժամանակությամբ: Սակայն Ժորիի բրեքի մեջ գտնվում է իզմիրցի դաշնակցական Տիգրան Նարանջյանի հասցենով՝ չերով ուղարկված գումարի մի արձանաբարություն, որի հետևանքով Խօմիրում նույնական խոզարկություններ ու ծերբականացներ են կատարվում և ամրող ծրագիրը ձախողվում է:

Մեծ մարդապանի ահարեկման փորձ, չնայած մշակված պահնի վիրխարփությանը և ունեցած լայն արձագանքներին, ձախողվում է: Սակայն, իր հերքին, սուլքան էլ չի համարձակվում կրկին դիմել ջարդերի փորձական միջոցին: Այդ հանգամանքը բացարձրվում է մի շաբթ պատճառներով:

Նախ՝ բավականին ժամանակ անցավ, մինչև բացահայտվեցին մահափորձի հեղինակները և այդ ընթացքում որոշակիորեն բուլացավ լարվածությունը:

Երկրորդ՝ մահափորձի միջազգային արձագանքները և ահարեկիչների արարքի դատապարտության շարժանանալը զգաստացրին Համբիրին: Նա հասկացավ, որ Եվրոպական կարծիքն իր հետ չէ և նոր ջարդերի իր համար հիմ են վատանգով:

Եվ վերջապես, իրենց բորբերի մեջ էլ միասնական չէր կարծիքը տեղի ունեցածի վերաբերյալ: Եթե Օսմանյան դրամատան գրավման օրերին Համբիրը պաշտպանություն գտավ անգամ իր թշնամի թուրք ընդդատիչների կողմից, ապա այս ղեպրում պատկերն այլ էր: Հայ վրիժառների նկատմամբ համակրանքի արտահայտություն էին մասնավորապես բանաստեղծ Թենիք Ֆիլքրերի գրած հետևյալ տողերը Ելլրզի ղեպրի մասին:

«Ո՛վ համբակավոր որսորդ, տանիքը ի գուր չկառուցեցիր, Նենեցիր, սակայն մեղր, շատ մեղր, որ չկրցար զարնել»:

Իր մեծ արձագանքներով հանենք, Ելլրզի պայքունը զնում էր պատճություն դառնալու: Այն նախատիա վեցին խոշոր ձեռնարկն էր: Մոտ հեռամկարում Երիարութական հեղաշրջումն էր, որը զայխ էր վերջ տալու օսմանյան բռնակալության դեմ ծափալվող հայկական վրիժառությանը և փակելու հայ ահարեկչության առաջին շրջանը:

1 Մայիսափ մոտի իրադարձությունները ներկայացվում են մի փոքր այլ կերպ, դեռև Մայիսաւ, Ապրունեիր, հ. Ա, Թիվորություն, 1956, էջ 381-382:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ահարևմտունը չսահմանափակեց միայն արևմտահայ իրականությամբ: 1903-1907 թթ. ամենահանդրուգն ահարեկշական ծեռնարկների քատերաբն դարձավ Կովկասը: Տանամյակներ շարունակ ցարիզմն այստեղ՝ Վարուժ էր մեծապետական, գաղուրային քաղաքականություն, որն ուղղված էր նաև արևմտահայության ազգային շահերի դեմ: «Արքերաբար փակվում էին հայկական դպրոցները, ամենալիխսա գլանանուրյան ին և ենրարկվում մամուլի օրգանները, հսկողության տակ էին քարեզորդական և մշակութային-լուսավորական հստատությունները, ուսմահարկում էին հայկական եկեղեցու իրավունքները: 1890-ական թվականներին այս ամենին գումարվում է նաև ցարիզմի բացահայտ քննամական վերաբերմունքը Հայկական հարցի հանդեպ: Հաճախակի են դատուում Արևմտյան Հայաստան շտապող զինված խմբերը՝ ջախջախսելու ռուս-բրյուրական հանագործակցության դեպքերը: Արևմտահայությունն՝ ատամները սեղմած, իր վրա էր ընդունում այս բոլոր հարվածները, ջնայած նրա աշխում զնալով խաճրում ու գումարափում էր «ազատաբար Ռուսաստանի» լուսապար: Այդ պայմաններում էլ նա դիմավորեց հայկական եկեղեցու կարգածները բռնագրավելու մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Ցարիզմը կրիվ էր հայտարարում հսյուրյանը: Վիրխարի պետական ապարատն իր ողջ ծանրությամբ վիզ էր գալիս հայության վրա: Մական վերջինի նկուն նարխնը տեղի չտվեց և բոլորուն չաղերսեց:

Մարտահրավերը նետված էր և արևմտահայությունն ընդունեց այն: Ոտքի կանգնեց երթեմնի հրու կովկասահայը, ուղղեց իր կորացած մնջը և ուժ տվեց բարովկներին: Ուժգնացալ ու պարհազար տասնամյակների ընթացքում ատելի ցարիզմի դեմ նրա հոգում կոտսակված զայրույրը: Հանդես Նկավ Հայկական ինքնապաշտապանության կենտրոնական կոմիտեն՝ որպես հայության հավաքական կամքի արտահայտիչ: Կովկասի հայարձնակ վայրերը ժողովրդական զանգվածային ցույցերի, ոսպիկանության, կազմակերպի ու գորքի հետ բախումների և բողոքի այլ դրսությունների ասպարեզ դարձաւ: Ցարիզմի դեմ պայքարի մեջ մեջ է դառնում ահարեկչությունը: Համարձակութեան ասպարեզ են նետվում հայ հեղափոխական կուսակցությունները, որոնք իրենց վրա են վերցնում ահարեկչական ամենահանդուզն գործողությունների կազմակերպումն ու իրականացումը:

Անցնում է կարճ ժամանակ: Գալիս ևս 1905-1906 թվականները: Անդկովկասն այս անգամ ցնցվում է հայ-բրյուրական կովկներից: Բարուն ու Թիֆլիսը, Երևանն ու Գանձակը, Զանգեզուրն ու Նախիջևանը, Շոշին և ողջ Ղարաբաղը վերաբռնում են սազմարեմի: Այս անգամ ար-

դեն փոտանգի տակ է դրվում արևելահայության ֆիզիկական գոյուրյան հարցը: Հայկական ինքնապաշտապանուրյան կազմակերպումն իր վրա է վեցնում Դաշնակցությունը: Այդ բախսարող պահին արևելահայության օգնության են շտապուս արևմտահայ լավագույն կովող ուժերը, որոնք շատ վայրերում վճռական դեր են խաղում ինքնապաշտապանուրյան կազմակերպման գործում: Համազգային այդ պայքարում իրենց կարևոր դերն ունենի կատարելու նաև հայ վրիժառուի դաշույնը, գնդակն ու ռումբը: Պատահական չէ, որ կովկների շրջանում տեղի ունեցած հայրուրական համագումարում բրյուրյան ներկայացնուցիչներն առանձնակի քշնամուրյանք իրն արտահայտվում հայկական ահարեկչության մասին այն համարելով գիտավոր չարիքը:

Վրիժառուրյան գաղտափարն այդ օրերին, իսկապես, համաժողովրդական էր և ընդգրկել էր արևմտահայության բոլոր խավերը՝ անկախ զասակարգային ու կուսակցական պատկաներությունից: Այդ հանգամանքը Նկողոյ Ա ցարին ուղղված էր զեկուցում հարկադրված էր խստովանել նաև Կովկասի փոխարքա Խ. Ի. Վորոնցով -Դաշկովը: «....Եկեղեցական գոյրերի գրավումը, գրում է նա, - վիրատորել է ժողովրդի բարոյական զգացումը և նրան համարեա գլխավին առանց դասակարգի ու կացորեան խորութեան, նետել յաղափոխական շարժման մեջ: Այս ահարեկչական ակտերի մեջ, որ գործադրվում էին կառավարական իշխանութեան ներկայացնուցիչների դեմ, որոնք այսպես, թե այնպես առնչութիւն ունենի գոյրերի գրավածն ենու, մասնակցում էին անուղղակի, եթե ոչ դրանով գոնի համակրանքով, բոլոր կովկասեան, զուցե և Ռուսաստանի շատ հայեր...»¹: Շարունակելով իր մնարքը, վիրաբան նշում է, որ «հայերի համակրանքն անեն մի ահարեկչական ակտի նկատմամար այնքան էր ակնյայտնի, որ նոյնիսկ Քուրախի նահանգի խստումները, որ հայ չկա ամենին, վերաբռնում էր նրանց սադրանքերին...»²:

Երկար սպասեցնել չտվեց իրեն հայկական վրիժառությունը Կովկասում: Հայ վրիժառուի պատժի ծեռքն առաջին հերթին ուղղվեց «հարազատների» ներքին հակառակորդների դեմ: Ըիշ չի նրանց թիվը, որոնք անցներունակ գտնվեցին բարոնելու բոլորի իմաստը, ստրացուցիչ քուրույրը նշաններ ցույց ավեցին՝ համակրավելով ցարական իրամանին և համագործակցելով իշխանությունների հետ: Ժողովրդական ցասումը

¹ Տիկ Դ. Ամանուն. Ռուսահայերի հասարակական գարգացումը, հ. 3 (1901-1918).

² Վանդակի. 1926, էջ 210-211:

² Դ. Ամանուն. Աշվ. աշխ.. էջ 368:

³ Նոյն գիշերում. էջ 369:

նրանց դավաճան անունը տվեց, իսկ վրիժառուի պատմիչ ձեռքն ամենուրեք սաստեց նրանց, հաշվի շառներով կոնկրետ անձնափորությունները: Հայ ահարեկի գնդակին ու գաշունին արժանացան հայազգի պաշտոնյաներ, գյուղական տանուտերեր, լրտես բահանաներ ու բուլամորթ երգփոխներ: Նրանց մեջ էին Սարգիս Փոքոյանը, Ստեփան Գեղամյանը և Անտոն Լորյանցը՝ սպանված Եջմանանոս Եկեղեցական գույքը գրավող համձնաժողովի աշխատամբներին նախակցելով համար, Ախալքարք Կորլու գյուղի բահանա Տեր Խաչատուրը՝ խեղդամահ արփած, Տեր Գարեգինը՝ զննակարպան՝ Ռուրդալուլում, բահանա Ալեքսանդր Տեր-Հովհաննիսյանը՝ սպանված Թիֆլիսում, առաջնորդարանի ծառայող Վահան Նազարետյանը՝ դաշտնահար Ախացիոյում, լրտես Կիրակոս Պետրոյանցը՝ սպանված Կարսի Պարգև գյուղում... Երկար կարեի է շարունակել այս ցուցակը:

Ամենուր էր հայ վրիժառուն՝ Կովկասի հայաբնակ յուրաքանչյուր անկյունուն: Նրա պատմիչ ձեռքը սաստում էր ամենքին և բուլամորթ ու քննող կեկեղեցական սպասավորներն ու պաշտոնյաները, հայանվելով երկու կրակի արաքուում, ծեծը, բանտարկությունը, պաշտոնը կորցնելն ու արտոր գերադասում էին կեկեղեցու ունեցվածքը գրավող համձնաժողովների աշխատանքներին նախակցելով կամ իրենց տնօրինության տակ եղած գույքը հանձնելուց:

Նման ծայրահեղ միջոցների ներգործությամբ սահմանափակվում էր ներքին բշնամիների թիվը, բարյապես նարքվում ներազգային նրբություն և հզոր ու ազեղիկ դառնում համազգային պայքարն ընդհանուր քննանություն էր շփոթեցնելով ու սարստեցնելով նրան: Անշուշա, այս պայքարն ունեցավ նաև իր ծայրահեղությունները: Հայկական ինքնապաշտպանությունը մի տեղ մերժում էր լուսի ազատությունը՝ սպանելով ուղղափառություն ընդունած հայություն, մեկ այլ տեղ կոտորում իր դուռը ուսումնական կնաքրյան տփած գյուղացու ընտանիքը, մի երրորդ վայրին մերժում այն ամենը, ինչ ուսական էր... Եվ ամենին էլ հայությունը չէր դրանում մեղադիմ ու պատասխանառություն: Ծիշու է նկատում Դ. Անանունը, թե «օրինականութեամբ չէ, որ կրտում է կառաւարութիւն հայութեան դեմ: Օրինականութեամբ չէ բնուկանարար պաշտպանություն և հայությունը»¹:

Ավելի հանդուզն ու ամենի լր հայ վրիժառությունը ցարական պաշտոնյաների սանձահարման խնդրում: Արևմտահայ իրականության մեջ բուրք պաշտոնյաների ահարեկման հարցում սովորաբար գուսապ և զգու-

1 Դ. Անանուն, Յշվ. աշխ., էջ 53:

շավոր հայ վրիժառուն կովկասահայ իրականության մեջ պաշտոնյաների ահարեկման հարցում ստանում է ազատ գործունեության սապարեա: Դա բացարդվում է նրանով, որ այսաւել պայմաններն ավելի նպաստավոր էին պայքարի նման ձեկի կիրառման համար:

Ժողովրդական ցատումը փնտրում էր գլխավոր հանցավորին, և անենքն էին համամիտ այս հարցում, որ հունիսի 12-ի օրենքի իրական հեղինակը կատավարչապետ Գ. Ս. Գոլիցինն է: Նա առաջին բարձրաստիճան ուսու պաշտոնյան էր, որի վրա բարձրացավ հայ վրիժառուի ձեռքը: 1903 թ. հոկտեմբերի 14-ին, երբ կատավարչապետը կառուն սպորտական պատուան էր գործում Թիֆլիսում, հնչակյան երեք վրիժառուներ ցատկելով կատրի վլա, դաշունի հարկաներ են հասցնում նրան: Միայն անունուն պաշտպանության ուղիւնից կազակի միջանտությունը վրիժառուներին խանգարեց մինչև վերը իրականացնել իրենց առարեւոքյունը: Կառքը սպասավայր իր հետ տանելով վիրավոր կատավարչապետին, իսկ վրիժառուները մինչև վերջին դաշտում լինարդեցին իրենց շրջապատճ կազակներին և զիկվեցին՝ երշանիկ այն մարից, որ «վրեժի գործը» կատարված է: Թեև Գոլիցինը միայն վիրավորված էր, այնուամենայնիվ հայությունը թերևացած չունչ քաշեց: Ավատանքի ու դատապարտության ոչ մի խոր չափու նրա շուրբերից: Եվ մինչ հպատակ ուսուները, վրացիները, հովաները, հրեաներն ու բուրքերը ստրկամիտ մարտանքներ էին կատարում Գոլիցինի առողջության համար, հայ-լուսավորչական զանգակատները պահպանում էին գերեզմանային լրություն:

«Ոչ որ չամարձակեց ծառուն անզամ հանել սարկի պարտը կատարելու համար,- գրում է Լեոն, - արգելված էր: Արգելողները հեղափոխականներն էին: Մի շատ ազդու, շատ հանդուզ ցույց էր այլ զանգային ցուրտ լուրյունը: Նա բացարդում էր ուսու բյուրոկրատներին, թե հայերը կատարյալ պատերազմն մեջ են նրանց դեմ»¹: Չնայած Գոլիցինը կենդանի մնաց, սակայն 1904 թ. հունիսի 28-ին զնաց արձակուրդ և այլն շվերադարձակ Կովկաս:

Գ. Ս. Գոլիցինի ահարեկումը ինքնակալության դեմ ահարեկչական պատերազմի սկիզբն էր միայն: Նման պայմաններում Կովկասի հայության յուրաքանչյուր զավառ ու քաղաք ունեցան իրենց դրաման: Թիֆլիսն ու Բաքուն, Երևանն ու Կարսը, Ալեքսանդրապոլն ու Գանձակը, Շուշին ու Խզդիրը, Բաքունն ու Օքին և հայաբնակ տասելյա այլ բնակավայրեր ականատեսվ եղան ամենահանդուզն ու ամենի վրեմյանդրա-

1 Լեռ. Անցյալից. Թիֆլիս, 1925, էջ 139:

կան ծևռնարկների: Տասնյակ մեծ ու փոքր իշխանավորներ, պաշտոնյաներ ու ուստիկաններ՝ դաժանության ու հայրականաց գործունեության համար հասուցեցին կյանքով:

Գանձակի հսկության 1903 թ. օգոստոսի 29-ի ջարդի հեղինակ, փոխնահնգապետ Անդրեևը՝ սպանված ասթճանակի 5 գնդակներով 1904 թ. հուլիսի 4-ին՝ Հաճիթենդում:

Սուրբայի հսկության դահիճ, հայատյաց բնակաւ զավառապետ Բոգուլսկին, որը 12 ասրի փոքրիկ ցար էր Մուրմանում, հրացանագարկ եղած Իգդիրում, 1904 թ. հուլիսի 10-ին:

Թումանի խմբի ջարդարար և հայ հայդուկների վրա խնդույր սարքով զնդապետ Քիկովը զնդակահար Օրիխում, 1904 թ. օգոստոսի 31-ին՝ Հանո՞ Զանփողայլամի վրիժառու ճեղորվ:

Թուրք զնդապետ Շերիֆ թէյը՝ ուսու և թորք սահմանապահների միջև կապեր ստեղծողը և հանի ու Ներուզի խմբերի ոչնչացմանը նպաստող, զնդակահար Կարսում՝ դաշնակցական ահարեկիչներ Գարեգինի և Ջուսայի ծննդով:

Բարքի նահանգապետ Խշլան Նակաշիձեն՝ Էջմիածնի կարգածքներն ու հարստորյանները հաշվառող հանձնախմբի նախագահը և Բարքի հայերի 1905 թ. Գյուղարքի ջարդերը հրահրող, սպրահարված Դրաստանատ Կանայանի (Դրո) վրիժառու ճեղորվ 1905 թ. նայիսի 11-ին:

Գորիհայի գյուղացիության և Նախիշեանի հայության դահիճ, բարքար զինփորական Ալիսանով-Ավարսկին՝ զնդակահարված Ալեքսանդրապուր Դրոյի և Սարտիրոս Չարուշյանի ճեղորվ, 1907 թ. ամռան:

Ոստիկանապետ Սախարովը, հարկային տեսուչ Շշերքակովը, պրիստավ Շումակիշը, պրիստավի օգնական Ֆյուլորովը, Ժանդարմ Պողշի-Վալովը, գաղտնի ոստիկան Խասիեր, սպաշտույաններ Բարյիկը և Կոպտանովը՝ սպանված Շոշիում, պրիստավի օգնական Մավանելին, ժանդարմների Բարգման Գրոգմով՝ սպանված Կարսում, զավառապետի օգնական Պավլովի և պրիստավի օգնական Նաշշանիկն՝ սպանված Ալեքսանդրապուր, կազակ սպաս Գնուտովը՝ սպանված Խոդիրում.... Եվ սա ամեններն էլ ամբողջական պատկեր չէ այն ահարեկայական պատերազմի, որ նդում էր կովկասիայությունը ցարական բյուրոկրատիայի հայատյաց ներկայացույցիների դեմ: Նրանցից ոմանք՝ սպասափած հայ վրիժառության բափից, գերադասում էին լրել իրենց պաշտոնավայրերը և փախչելով Ռուսաստան, խոսափել վրիժառուի զնդակից: Թեև սկեսք է խոստովանել, որ ամենքին չէր հաջողվում այդ կերպ վրկել արդարացի պատմից: Եթե Էջմիածնի սինովի դասախազ Կանչելին, որը ստորև և ստահող գեկուցագրերի հեղինակ էր և առաջիններից մեկն արժանի ահարեկման,

կարողացավ սարսափահար փախուստով վրկել իր կյանքը, ապա օրինակ, Երևանի նահանգապետարանի բրբամու պաշտոնյա Կենգերլինսկուն դա էլ չօգնեց, բանզի Նիկոյ Գոմանի ուղարկած ահարեկիչները նրան հետապնդեցին մինչև Բարում, որտեղ էլ ի կատար ածվեց մահավճար:

Հսկայսկան էին հայ վրիժառության ծավալները Կովկասում, և ուժգին էր վրեժիսնորական հարգածների բավիլ: Դրանց շննդաից արձագանքները հասնում էին Անդրկովկասի բոլոր անկյունները՝ ահ ու սարսափի մասնելով ցարական մեծ ու փոքր պաշտոնյաններին: Սակայն, այդ բոլորով հանդերձ, հայ վրիժառությունը մնում էր ինքնապաշտպանության շրջանակներում և ընդիհանուր առնամբ իր առջև չեղ դնում համապետական մասշտաբով գոյություն ունեցող կարգերը հեղափոխություն նախատակ: Ծիշու է, հայ ազատազրական պայքարի գործի կանգնած անենազդեցիկ կոսակցություն՝ դաշնակցությունը, որի ուսերին էր իհմնականում ծանրացած հայ վրիժառության հոգաց, 1904 թ. դեկտեմբերին մասնակցում է Ռուսաստանի հեղափոխական և ընդիմադիր ուժերի՝ Փարզում գոյանական համաժողովին և համաժայնություն հայտնում իր մասնակցությունը թէրել ցարական բռնապետության տապարման գործին!, սակայն այդ համենառությունը փաստում մնում է թրի վրա, բանի որ շուտով սկսված հայ-բարարական ընդիմադուները կրկին գալիս են շեղելու հայության ուշադրությունը համառուսական խնդիրներից: Եվ, եթե դեռ շարունակվում էր անհարեկությունը, ապա դրանք ուղղված չին պարզապետ ցարական պաշտոնյանների դեմ և նպաստակ չին հետապնդում խարիզմել ցարիզմի հիմքերը: Դրանք հայ-բարարական ընդհարումների ընթացքում հայահակած գործունեությամբ աշքի ընկած պաշտոնյանների դեմ վրեժիսնորական ճեղնաբերներ էին: Թեև հայ ահարեկությունը տեղ-տեղ կարծես փորձ էր անում դրս զալ զուտ ինքնապաշտպանության շրջանակներից և ստանալ հարձակութական երանց: Այդ մասին է Վկայում 1905 թ. մայիսին ղաշնակցության կողմից Կովկասում հրապարակված նշանափոր հայտարարությունը: «Հ.Յ. Արանով յայտարարում է թողոք ոստիկաններին, ստրածներին, ոստիկանապետներին, զաւառապետներին, ժանտարմաններին,- ասկում էր նրանում,- որ այսուհետև նրանցից իրաքանչիւրը անխնայ կերպով կոչնշացուի, եթե համարձակուի հայերի ճեղքից գենք խնել, խուզարկութիւն կատարել կամ բանտարկել այդ նպատակով: Թող նրանցից իրաքանչիւրը, նախքան այդ տեսակ գործ սկսելու, յիշլ Բագուի նահանգապետ Նակա-

1 Տի՛ս Գ. Լուգիան. Հայության և հայ դադը. Երևան. 1991. Էջ 131-133:

շիցէին, Գանձակի փոխ-նահանգապես Անդրէսին..... և ուրիշ շատերին, որոնք Հ.Յ.Դ. վճռով մահուան պատժին են արժանացել»¹:

Նման երևոյթները, սակայն, Էպիզոդիկ էին: Եվ երբ Անդրկովկասում հեղափոխական խրառումները, բնականաբար, առաջին հերթին, հայկական շարժումները, բուլացնելու նկատառումով Նիկոլայ Ռ.-ը 1905 թ. օգոստոսի 1-ին չեղալ է համարում 1903 թ. հունիսի 12-ի օրենքը, դա անմիջապես իր ազդեցույթունն է բոլորու նաև Անդրկովկասում հայկական ահարենկուրյան վրա: Ավարտվում է այն ընդհանուր ահարենշական պատերազմը, որ մղում էր հայուրյունը ցարիզմի դեմ: Այդ փաստն արձանագրում է նաև Վորոնցով-Դաշկովը ցարին ուղղած իր գեկուցագրում, շեշտուլով, որ 1905 թ. օգոստոսի 1-ի որոշումից հետո «հայերի մասնակցութիւնն ահարենկական ակտերում նկատելիօրէն յանկարծակի պակասում է»²: Շիշու է, որանից հետո էլ նի որոշ ժամանակ Անդրկովկասի այս կամ այն փայրում դեռևս իրեն զացանել էր տախու հայ վրիժառոի պատժին ծեռորդ, սակայն դա ավելի շուրջ թելարված էր հայ-քարարական ընդհարումների հետևանքով ստեղծված դաժան անհրաժեշտուրյամբ:

Ինչպիսի՞ր էին շորջ շրու տարի տևած հայկական ահարենկուրյան արդյունքներն Անդրկովկասում: Արյուն՝ հայկական դիմադրուրյան և մասնավորապես ահարենկուրյան դերը իրոք շատ սահմանափակ էր, և նրանց չէր պարտական հայուրյունն, երբ կրկին հետ էր ստանում եկեղեցական կալվածներն ու դպրոցներ բացելու իրավունքը, այլ ուսական հեղափոխուրյան, ինչպես պնդում է Գ. Անանոնք³, կամ էլ ճապոնական գենքի հարքանակին, ինչում փորձում է հանգել Լեռնա: Ինարկեն, չենք միտում, որ թէ ճապոնիայի դեմ պատերազմում ցարիզմի պարտուրյունը, թէ ուսական հեղափոխուրյան սրբնքաց ծափալում, իրոք, բուլացրին ցարիզմի դիրքերը՝ նպաստելով նախորդ տարիներին ընդունիս հականայկական օրենքների չեղալ հայտարարմանը: Սակայն, միամտուրյուն կիմենք կարծել թէ ցարիզմը կզնար այդ քայլին, եթե դրան չնախարդեին հայերի զանգվածային ելույթները և հատկապես ցարական բյուրկարահայի ներկայացուցիչների դեմ մղող ահարենշական պատերազմը: Ծէ՝ որ ցարական շնորհը նպատակ էր հետապնդում չեղորացնել հենց այդ գործուները: Այսպիսով, 1905 թ.

1 «Դրոշակ», 1905, N 7:

2 Գ. Անանոն, Աշխ., էջ 369:

3 Տե՛ս Անյն գրելում, էջ 139:

4 Տե՛ս Լեռ, Անյն գրելում, էջ 159-160:

օգոստոսի 1-ի ցարական իրամանագիրն առաջին հերթին և զիսավորապես արդյունք էր դրան նախորդած շորջ երկամյա այն համաւ պայքարի, որ մղում էր կովկասահայուրյունը ցարիզմի դեմ և այդ պայքարում կարմր էր հայ վրիժառուրյան դերը:

Եթեաւահումով պետք է ընդունել նաև Լեռի այն կարծիքը, թէ իրը հայկական ահարենկուրյունը դրական արդյունքներ չունենալով, նաև նպաստակահարմար չէ, բանի որ ավելի ուժեղացրեց ցարական բյուրուրատիայի թշնամանը հայուրյան նկատմամբ, և նրանք հայուրյան դեմ իրահեցին կովկասյան բրությանը՝ սանձազերծելով հայ-քարարական ընդհարումները: Ինարկեն, հայ վրիժառուրյան պատճառով ուսւ պաշտօնյաների աշառու և թշնամական վերաբերմունքը հայ-քարարական ընդհարաբանների շրջանում ակնհայտ փաստ է, որը ստիպված խոստվանում է նաև Վորոնցով - Դաշկովը⁵: Սակայն հայ-քարարական ընդհարումները միայն դրանով բացարելը ճիշտ չէ: Դրանց իմքում ընկած էին տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային, ազգային-հոգեբանական բակականին լուրջ պատճառներ, որոնց վերուժուրյունը, սակայն, դուրս է սույն հետազոտուրյան շրջանակներից: Եթե անգամ լիովին ընդունենք Լեռի փաստարկը, ապա դարձայի դմիքը չէ որոշեն, թէ իսկապես իմշն էր զերայսամբ հայուրյան համար՝ ստրկական համբերուրյանը ազգային արժանապատվուրյունը ուսնահարող հարփածներ ստանալը և իշխանուրյուններից «քարեհաճուրյունը» - ձեռք բերելը, թէ ահարենկիչ պետուրյանը ահարենկամբ պատասխաննելը, թեկուզ լուս համար հարկ լիներ և ուղկասի բրության դեմ պատերազմել: Հայուրյունը զնաց երկրորդ ճանապարհով, և կարծում ենք նա այլլաւանք չաներ, և թե ցանկանում էր ինքնուրույն բաղաքական գործոն դառնալ Անդրկովկասում:

1903-1907 թվականների բաղաքական բուռն պայքարից կովկասահայուրյունը, որին բուրդը տվողը էին անսնել հնազանդ, իրու վիճակում, ընկանուր առմանը դրւու նկավ շահած, գլուխը բարձր և ավելի ուժեղ: Այն դարձավ կովկասի բաղաքական կյանքը որոշող գործուներից մնկը, որի հետ արդեն հարկադրված էին հաշվի նստել բուրդը: Եվ այդ գործում իսկապես անորանալի էր հայ վրիժառուրյան դերը:

1 Տե՛ս Լեռ, Անյն գրելում, էջ 144:

2 Տե՛ս Գ. Անանոն, Աշխ., էջ 213-214: